

5

ՕԳՈՍՏՈՍԻ
2020

Luys



Linyu®



ՀՀ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ
ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ ԱՐՏԱՔԻՆ
ՄԻՋԱՎԱՅՐՈՒՄ ԵՎ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆՈՒՄ
ՏԵՂԻ ՈՒՆԵՑԱԾ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՏԵՔՍՈՒՄ

ՀՀ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ ԱՐՏԱՔԻՆ ՄԻՋԱՎԱՅՐՈՒՄ ԵՎ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆՈՒՄ ՏԵՂԻ ՈՒՆԵՑԱԾ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՏԵՔՍՈՒՄ



ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ.....	1
1. ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՐՏԱՔԻՆ ԱՆՎՏԱՆԳԱՅԻՆ ՄԻՋԱՎԱՅՐԸ 2007Թ. ԱԶԳԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՄՇԱԿՄԱՆ ԺԱՄԱՆԱԿ.....	3
1.1. ՀՀ անվտանգության արտաքին սպառնալիքները՝ ըստ 2007թ. ռազմավարության.....	5
1.2. ՀՀ արտաքին անվտանգության նախորդ ռազմավարությունը	9
2. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՆԵՐԿԱՅԻՍ ԱՐՏԱՔԻՆ ԱՆՎՏԱՆԳԱՅԻՆ ՄԻՋԱՎԱՅՐԸ.....	10
2.1. Գլոբալ անվտանգային միջավայրը.....	10
2.2. Տարածաշրջանային անվտանգային միջավայրը	12
3. ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՆՈՐ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՐՏԱՔԻՆ ԱՆՎՏԱՆԳԱՅԻՆ ՄԻՋԱՎԱՅՐԸ ՄԻՋՆԱԺԱՄԿԵՏ ՀԵՌԱՆԿԱՐՈՒՄ	21
3.1. ՀՀ ազգային անվտանգության նոր ռազմավարությունը	21
3.2. Հայաստանի արտաքին անվտանգային միջավայրը միջնաժամկետ հեռանկարում	30
4. ԱՐՑԱԽՅԱՆ ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳԱՀԱՏԱԿԱՆՆԵՐԸ ՆԱԽԿԻՆ ԵՎ ՆԵՐԿԱՅԻՍ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ	34
ՀԵՏԵՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ	39

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

2020թ. հուլիսի 10-ին տեղի ունեցավ ՀՀ անվտանգության խորհրդի նիստը, որի ժամանակ ներկայացվեց Հայաստանի ազգային անվտանգության նոր ռազմավարությունը¹: Վերջին տարիներին ակտիվորեն քննարկվում էր անվտանգության նոր ռազմավարության մշակման հարցը, թեև դրա անհրաժեշտության մասին ոլորտի մասնագետները վաղուց էին բարձրաձայնում: Անվտանգության նոր ռազմավարության մշակման թեմայի քննարկումը հատկապես ակտիվացավ 2016թ. Ապրիլյան պատերազմից հետո, երբ բոլորի համար ակնհայտ դարձավ, որ տարածաշրջանում և աշխարհում տեղի ունեցած փոփոխությունները անհրաժեշտ ձևով արտացոլված չեն դեռևս 2007-ին ընդունված ռազմավարության մեջ: Նախորդ մի քանի տարիներին անվտանգության նոր ռազմավարության մշակման գործընթացը պարբերաբար հետաձգվել է մի շարք օբյեկտիվ պատճառներով՝ Ապրիլյան պատերազմ, խորհրդարանական ընտրություններ, երկրում կառավարման համակարգի փոփոխություններ՝ անցումային շրջան, իշխանափոխություն:

Դեռևս 2018թ. հունվարին արտգործնախարարության ղեկավար կազմի հետ հանդիպման ժամանակ նախագահ Սերժ Սարգսյանը հայտնել էր, որ երկրի ղեկավարությունը պատրաստվում է վերանայել ազգային անվտանգության ռազմավարությունը: Հատկանշական է, որ ՀՀ երրորդ նախագահը անվտանգության ռազմավարության վերանայման և արդիականացման գաղափարը առաջ էր քաշել հենց ԱԳՆ-ում՝ նշելով, որ Հայաստանի ազգային անվտանգության առաջնային մարտահրավերները հիմնականում առնչվում կամ ուղղակիորեն փոխկապակցված են արտաքին միջավայրի հետ²: Ինչևէ, Հայաստանում տեղի ունեցած ներքաղաքական զարգացումները այդ ժամանակ նորից ձգձգեցին անվտանգության նոր ռազմավարության մշակման աշխատանքները:

Դեռևս 2019թ. հուլիսի 16-ին պաշտոնական հաղորդագրություն տարածվեց, որտեղ նշվում էր ազգային անվտանգության ռազմավարության մշակման միջգերատեսչական հանձնախմբի ստեղծումը, հանձնախմբի անհատական կազմը և

¹ Երևանում տեղի է ունենում Հայաստանի Հանրապետության անվտանգության խորհրդի նիստը, 10.07.2020թ., https://www.seco.am/security_council/sessions/61?lang=hy (այցելվել է 05.08.2020թ):

² Նախագահը հանդիպում է ունեցել ԱԳՆ ղեկավար կազմի հետ, 30.01.2018թ., <https://www.president.am/hy/press-release/item/2018/01/30/President-held-a-meeting-in-the-foreign-ministry/> (այցելվել է 05.08.2020թ):

գործունեության կարգը հաստատելու վերաբերյալ վարչապետի որոշման մասին³: Հուլիսի 26-ին ասուլիսով հանդես եկավ ԱԽ քարտուղար Արմեն Գրիգորյանը, ով մեկնաբանեց նոր ռազմավարության մշակման վերաբերյալ վարչապետի որոշումը⁴: Նշվեց նաև, որ ՀՀ անվտանգության նոր ռազմավարության մշակման աշխատանքները պետք է ավարտվեն մեկ տարվա ընթացքում, և ահա 2020թ. հուլիսի 10-ին այդ փաստաթուղթը հրապարակվեց:

Ինչպես նշվեց, Հայաստանի համար անվտանգության ռազմավարության մշակման գործում շատ կարևոր է հատկապես արտաքին միջավայրի համընդգրկուն ուսումնասիրությունը և դրան համարժեք՝ սպառնալիքների գնահատումը: Կապված մի շարք իրողությունների հետ՝ տարածաշրջանում ուժերի դասավորվածությունը, աշխարհաքաղաքական դերակատարների շահերը, Արցախյան հակամարտությունը, փակ սահմանների առկայությունը, տարանցիկ ուղիների և ենթակառուցվածքների հետ կապված բարդությունները, մի շարք հակամարտությունների սրման հավանականությունը, պատմական հանգամանքները և այլն, մեր անվտանգության ռազմավարության առաջնահերթությունների սահմանումը պետք է սկսել հենց արտաքին անվտանգային միջավայրից:

Միաժամանակ, ի դեմս նոր տիպի կորոնավիրուսի համաճարակի՝ վերոհիշյալ արտաքին մարտահրավերներին ավելացնել են նորերը: Դրանց թվում են գլոբալ առողջապահական ճգնաժամը, դրանից բխող և առաջիկայում սպասվող տնտեսական և սոցիալական ցնցումները, աշխարհաքաղաքական վերադասավորումների ակտիվացումը, գերտերությունների՝ առաջին հերթին ԱՄՆ-ի և ՉԺՀ-ի միջև հակասությունների խորացումը: Բացի այդ, տարբեր երկրներում համաճարակի հետևանքով առաջացող և ակնկալվող ցնցումները կարող են ավելի անկայուն ու անկանխատեսելի դարձնել միջազգային տարբեր դերակատարների, այդ թվում՝ գերտերությունների ու տարածաշրջանի երկրների վարքագիծը:

Սույն վերլուծությամբ փորձել ենք ներկայացնել անվտանգության ռազմավարության արտաքին անվտանգային բաղադրիչի վերաբերյալ մի քանի դիտարկումներ, ինչպես նաև վերլուծել անվտանգության նոր ռազմավարության շրջանակներում Հայաստանի արտաքին անվտանգային միջավայրի, առկա և հնարավոր սպառնալիքների, առաջարկվող ռազմավարական լուծումների

³ Հայաստանի Հանրապետության վարչապետի որոշում, 16.07.2019թ., http://seco.am/information/press_releases/240?lang=hy (այցելվել է 05.08.2020թ):

⁴ ԱԽ քարտուղարի մամուլի ասուլիսը, 26.07.2019, <http://seco.am/information/interviews/39?lang=hy#> (այցելվել է 05.08.2020թ):

վերաբերյալ տրված գնահատականները: Այդ նպատակով ուսումնասիրել ենք, թե ինչպիսի արտաքին անվտանգային միջավայրում է մշակվել ու շրջանառության մեջ դրվել անվտանգության նախորդ ռազմավարությունը, ինչ իրավիճակ ունենք այսօր, որքանով է ընդունված նոր ռազմավարությունը համարժեք այդ միջավայրին, ինչպիսի իրավիճակ կարող է լինել միջնաժամկետ հեռանկարում:

1. ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՐՏԱՔԻՆ ԱՆՎՏԱՆԳԱՅԻՆ ՄԻՋԱՎԱՅՐԸ 2007Թ. ԱԶԳԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՄՇԱԿՄԱՆ ԺԱՄԱՆԱԿ

Հետաքրքիր է, որ ազգային անվտանգության նախորդ ռազմավարությունը մշակվել ու շրջանառության մեջ է դրվել մի ժամականահատվածում, երբ Հայաստանի արտաքին անվտանգային միջավայրում դեռ նոր սկսվում էին գործընթացներ, որոնք հետագայում էական տրանսֆորմացիայի էին ենթարկելու այդ միջավայրը: Թերևս սրանով է պայմանավորված այն հանգամանքը, որ նախորդ ռազմավարության մեջ կանխատեսվել են մի շարք արտաքին մարտահրավերներ, որոնք այսօր արդեն անհերքելի իրողություններ են դարձել:

Հետաքրքիր զուգադիպությամբ, 2007թ. ռազմավարությունը⁵ ընդունվեց 2008-2009 թվականների համաշխարհային ֆինանսական ճգնաժամի նախօրեին: Իսկ այժմ, փաստորեն, Հայաստանը թարմացրեց իր անվտանգության ռազմավարությունը ԿՈՎԻԴ-19 համաճարակի հետևանքով սպասվող նոր համաշխարհային տնտեսական, հումանիտար և առողջապահական ճգնաժամի նախաշեմին: Տարբեր կանխատեսումների համաձայն՝ այն կարող է աննախադեպ մասշտաբների հասնել՝ զգալիորեն գերազանցելով 2008-2009 թվականների ճգնաժամը:

Աշխարհում գլոբալ մակարդակում տեղի ունեցող էական փոփոխությունների և վերադասավորումների պայմաններում չափազանց դժվար է մշակել և ստանալ այնպիսի ռազմավարություն, որը ոչ միայն ճշտգրիտ կարտացույց երկրի առջև ծառացած կայուն մարտահրավերներն ու սպառնալիքները, այլ հնարավորություն կտա կանխատեսել և արդյունավետ լուծումներ նախատեսել սպասվող փոփոխությունների արդյունքում ի հայտ եկող նոր մարտահրավերների համար:

Թերևս այս տեսանկյունից 2007-ին ընդունված ռազմավարությունը հիմնականում կարողացել է կյանքի կոչել իր առաքելությունը, քանի որ դրա մշակման

⁵ ՀՀ ազգային անվտանգության ռազմավարություն, 26.01.2007թ., <http://www.mil.am/files/LIBRARY/HHAAR/827.pdf> (այցելվել է 05.08.2020թ.):

Ժամանակ հնարավոր է եղել բավական ճիշտ գնահատել Հայաստանի արտաքին անվտանգային միջավայրում առկա և սպասվող զարգացումները: Արդյունքում, չնայած աշխարհում և տարածաշրջանում տեղի ունեցած հզոր ցնցումներին և բուռն իրադարձություններին՝ Հայաստանը ընդհանուր առմամբ կարողացել է ապահովել պետության անվտանգությունը և զերծ մնալ արտաքին միջավայրից բխող անդառնալի կորուստներից:

Այսպես, նախորդ ռազմավարության մշակման ժամանակահատվածում արդեն իսկ բավականին սրվել էին ռուս-վրացական հարաբերությունները, և Հայաստանը ստիպված էր հաշվի առնել Վրաստանով անցնող տարանցիկ ուղիների փակման բացասական հետևանքները: Դեռ նոր էր խորանում Իրանի դեմ միջազգային հանրության կողմից լայնածավալ տնտեսական պատժամիջոցների կիրառման պրակտիկան: Այս ժամանակաշրջանում սկսվեց Ադրբեջանից նավթի արտահանման ծավալների էական ավելացման գործընթացը, ինչը Բաքվին թույլ տվեց զգալիորեն ավելացնել ածխաջրածնի վաճառքից ստացվող եկամուտները: Ադրբեջանը ակտիվացրել էր իր ռազմատենչ հռետորաբանությունը, տվել էր սպառազինությունների մրցավազքի մեկնարկը և շփման գծում սկսել էր լուրջ սադրանքներ նախապատրաստել:

Նույն ժամանակահատվածում սկսվեցին նկատվել Ռուսաստան-Արևմուտք հարաբերությունների նոր՝ աննախադեպ սրման առաջին նշանները, թեև դեռ դժվար էր պատկերացնել, թե հետագայում այն ինչ մասշտաբների կհասնի: Մերձավոր Արևելքում ստեղծվել էին անկայունության առաջին օջախները, որոնք հետագայում տարածաշրջանում մի շարք փոփոխությունների պատճառ դարձան: Նշմարվում էին համաշխարհային տնտեսական ճգնաժամի նախանշանները:

Ինչպես տեսնում ենք, վերոհիշյալ բոլոր իրադարձությունները հետագայում հանգեցրին տարածաշրջանում աշխարհաքաղաքական դասավորվածության զգալի փոփոխությունների: Այս առումով հետաքրքիր է հասկանալ, թե 2007թ. ռազմավարությունը որքանով է ճիշտ կանխատեսումներ կատարելու և ռազմավարական ճիշտ ուղենիշեր սահմանելու հնարավորություն տվել:

1.1. ՀՀ անվտանգության արտաքին սպառնալիքները՝ ըստ 2007թ. ռազմավարության

Ուժի կիրառում.

Այսպես, 2007թ. ռազմավարության մեջ արտաքին սպառնալիքների շարքում առաջինը նշվում էր Ադրբեջանի կողմից զինված ուժի կիրառումը: Ընդ որում, նշվում էր, որ Թուրքիան, լինելով Ադրբեջանի ռազմավարական դաշնակիցը, նույնպես կարող էր նման սպառնալիք ստեղծել: Ուշագրավ է, որ **նախորդ ռազմավարությամբ Թուրքիայի և Ադրբեջանի կողմից Հայաստանի շրջափակումը դիտարկվում էր որպես Հայաստանի դեմ ուժի կիրառում:**

Ապրիլյան պատերազմը, ինչպես նաև հայ-ադրբեջանական սահմանի վերջին զարգացումները ցույց տվեցին, որ ուժի կիրառման սպառնալիքը, իրոք, ՀՀ անվտանգության գլխավոր մարտահրավերներից մեկն է: Ընդ որում, 2007թ. ռազմավարության մեջ ճիշտ էր Ադրբեջանի ու Թուրքիայի գործողությունների դիտարկումը ընդհանուր համատեքստում, քանի որ թե՛ 2016թ. ռազմական գործողությունների ընթացքում, թե՛ ներկայումս Անկարայի անվերապահ աջակցությունը Ադրբեջանին ապացուցում են դա: Ինչ վերաբերում է երկու երկրների կողմից Հայաստանի շրջափակումը՝ որպես ուժի կիրառում դիտարկելուն, ապա այստեղ նույնպես հայ-թուրքական արձանագրությունների ճակատագիրը ցույց տվեց, որ թուրք-ադրբեջանական շրջափակումը անմիջապես կապված է նաև Արցախյան հակամարտության հետ և նպատակ ունի Հայաստանի նկատմամբ ճնշումների միջոցով միակողմանի զիջումների հասնել:

Էթնիկ հակամարտություններ, ներքին բախումներ և ռազմական գործողություններ սահմանակից երկրներում.

2007թ. ռազմավարության մշակման պահին արդեն իսկ փակվել էին Թբիլիսի-Սուխում երկաթգիծն ու Վրաստանի տարանցիկ ավտոճանապարհները: 2008թ. ռուս-վրացական պատերազմը ցույց տվեց, թե մեր երկրի համար ինչպիսի բացասական հետևանքներ կարող են ունենալ սահմանակից երկրում ռազմական գործողությունները: Այլ հարց է, որ այս սպառնալիքի հաղթահարման համար այդպես էլ լուրջ ռազմավարական լուծումներ գտնել հնարավոր չեղավ: Մինչույն ժամանակ Հայաստանը զգաց նաև տարածաշրջանի այլ երկրներում ներքին բախումների ազդեցությունը. Սիրիայում, Իրաքում ռազմական գործողությունները նպաստեցին տարածաշրջանի ընդհանուր ապակայունացմանը, Հայաստանը կանգնեց հայազգի ներգաղթյալների ընդունման բարդ խնդրի առջև:

Իրանի դեմ միջազգային պատժամիջոցները.

Նախորդ տարիների փորձը ցույց տվեց, որ Իրանի դեմ միջազգային պատժամիջոցների խստացումը անբարենպաստ պայմաններ ստեղծեց Հայաստան-Իրան տնտեսական համագործակցության համար: Այսպես, 2000-ականների առաջին տասնամյակում նկատվող դրական տեղաշարժը՝ Իրան-Հայաստան գազատարի, բարձրավոլտ էլեկտրահաղորդման գծերի, Պուշկինի լեռնանցքում հողմաէլեկտրակայանների կառուցում, հնարավոր չեղավ նույն տեմպով շարունակել նաև հետագա տարիներին: Սա հիմնականում պայմանավորված էր Իրանի նկատմամբ միջազգային պատժամիջոցների խստացմամբ և դրա հետևանքով այդ երկրում ի հայտ եկած տնտեսական խնդիրներով:

Արդյունքում հայկական մի շարք նախագծեր՝ Հյուսիս-Հարավ մայրուղի, Իրան-Հայաստան երկաթգիծ, բարձրավոլտ էլեկտրահաղորդման 3-րդ գիծ, Արաքսի վրա ՀԷԿ-ի, Հայաստանում նավթի վերամշակման գործարանի կառուցում և երկու երկրների համար կարևորություն ունեցող այլ ծրագրեր բախվեցին լուրջ խոչընդոտների հետ: Իրավիճակը մի փոքր կարգավորվեց 2015-ին Իրանի, Միացյալ Նահանգների և 5 այլ պետությունների միջև Գործողությունների համատեղ համապարփակ ծրագրի (ԳՀՀԾ) համաձայնագրի⁶ (Միջուկային համաձայնագրի) կնքումից հետո, երբ հույսեր առաջացան, որ Իրանի նկատմամբ միջազգային պատժամիջոցների չեղարկումը կնպաստի նաև երկկողմ տնտեսական հարաբերությունների զագացմանը և արդեն իսկ շրջանառվող նախագծերի իրականացմանը: Սակայն Իրանի նկատմամբ ԱՄՆ-ի քաղաքականությունը կարճ ժամանակում մարեց նաև այդ հույսերը, և այսօր էլ երկկողմ տնտեսական հարաբերությունները բախվում են Իրանի նկատմամբ ամերիկյան պատժամիջոցների ծանր իրողության հետ:

Ռազմավարական դաշինքների թուլացումը.

2007թ. ռազմավարության մեջ ՀՀ անվտանգության սպառնալիքների շարքում նշվում էր նաև ռազմավարական դաշինքների հնարավոր թուլացման և դրանցում Հայաստանի ոչ բավարար ներգրավվածության վտանգների մասին: Խոսքը առաջին հերթին ՀԱՊԿ-ի մասին էր: Ընդ որում, սպառնալիքների շարքում դիտարկվում էր դաշինքի մեկ անդամի կողմից մեկ այլ անդամի շահերին հակասող

⁶ Joint Comprehensive Plan of Action, Vienna, 14 July 2015, <https://www.europarl.europa.eu/cmsdata/122460/full-text-of-the-iran-nuclear-deal.pdf> (այցելվել է 05.08.2020թ):

գործողությունների վտանգը: Նախորդ տասնամյակի ընթացքում Հայաստանը մեկ անգամ չէ բախվել այս ուղղությամբ ի հայտ եկած խնդիրների հետ, սակայն օբյեկտիվ պատճառներով ոչ միշտ է հնարավոր եղել չեզոքացնել բոլոր վտանգները:

Պետք է նշել, որ ՀՀ իշխանությունները բազմիցս ՀԱՊԿ-ի շրջանակներում ամենաբարձր մակարդակում բարձրացրել են Ադրբեջանին զենքի վաճառքի խնդիրները, ինչպես նաև հայկական կողմի ջանքերի շնորհիվ ապահովվել են Ադրբեջանի կողմից հրադադարի ռեժիմի խախտման առիթով ՀԱՊԿ-ի պաշտոնական ու հասցեկան հայտարարություններ⁷: Այս ուղղությամբ դեռ իրականացնելու շատ աշխատանքներ կան, սակայն ՀԱՊԿ-ից ակնկալիքներին զուգահեռ, հայկական կողմը նույնպես պետք է հնարավորինս զերծ մնա այդ կառույցը հեղինակագրկելու, այնտեղ ինքնամեկուսացվելու ռիսկեր առաջացնող գործողություններից, որոնց, ցավոք, ականատես ենք լինում վերջին երկու տարիների ընթացքում:

Էներգետիկ կախվածությունը.

Հայաստանը, չունենալով էներգետիկ լուրջ պաշարներ, էներգակիրների ներմուծումից ունի բնական կախվածություն, սակայն այս կախվածությունը որոշակիորեն մեղմվել է Ռուսաստանի հետ ռազմավարական-դաշնակցային հարաբերությունների շնորհիվ, ինչի արդյունքում Հայաստանը տարիներ ի վեր Ռուսաստանից ստացել է միջազգային գների համեմատ բավականին էժան գազ: Թեև ռուսական կողմի մենաշնորհային կարգավիճակը գնագոյացման առումով որոշակի խնդիրներ է ստեղծում, սակայն եթե հաշվի առնենք մրցունակ այլընտրանքի բացակայության հանգամանքը, ապա ընդհանուր առմամբ հայ-ռուսական բարեկամական հարաբերությունները մեծապես նպաստում են Հայաստանի էներգետիկ անվտանգության երաշխավորմանը:

Ինչ վերաբերում է իրանական գազին, ապա մասնագետները բազմիցս նշել են, որ իրանական կողմը ոչ այնքան մրցունակ գին է առաջարկում: Փոխարենը վերջին տարիներին հաջողությամբ իրականացվում է գազ՝ էլեկտրաէներգիայի դիմաց ծրագիրը, ինչը որոշակիորեն նպաստում է գազի ներմուծման դիվերսիֆիկացիային: Ընդհանուր առմամբ, Իրան-Հայաստան գազատարի առկայությունը երաշխավորում է ճգնաժամային իրավիճակներում, ռուսական գազի տարանցման հետ կապված

⁷ ОДКБ: действия Баку ведут к эскалации ситуации в зоне карабахского конфликта, 02.04.2016, <https://www.militarynews.ru/story.asp?rid=1&nid=408109&lang=RU> (այցելվել է 05.08.2020թ):

հնարավոր խնդիրների առաջացման պարագայում դեպի Հայաստան գազի անխափան մատակարարումը:

Հայաստանի համար շատ կարևոր է էլեկտրաէներգիայի արտադրության շարունակական աճի ապահովումը, ու թեև այդ ուղղությամբ վերջին տասնամյակի ընթացքում մեծ ջանքեր են գործադրվել, 2018-ից սկսած Հայաստանում էլեկտրաէներգիայի արտադրության կրճատման միտում է նկատվում: Էներգետիկ անվտանգության տեսանկյունից Հայաստանի համար մեծ կարևորություն ունի ատոմակայանի արդիականացումը, արևային էներգետիկայի զարգացումը և նոր ՀԷԿ-երի կառուցումը, ինչի համար անհրաժեշտ կլինի լուրջ արտաքին ներդրումներ ներգրավել և այդ ներդրումների համար երկրում բարենպաստ միջավայր ապահովել:

Հայաստանի մեկուսացումը տարածաշրջանային ծրագրերից.

ՀՀ անվտանգության նախորդ ռազմավարության մեջ արտաքին սպառնալիքների շարքում նշվում էր նաև տարածաշրջանային ծրագրերից Հայաստանի մեկուսացման վտանգը: Ուշագրավ է, որ ռազմավարության մշակման ժամանակ արդեն իսկ շահագործման էին հանձնվել Բաքու-Թբիլիսի-Ջեյհան նավթատարն ու Բաքու-Թբիլիսի-Էրզում գազատարը: Նախատեսվում էր Բաքու-Թբիլիսի-Կարս երկաթգծի շինարարությունը, ինչպես նաև ակտիվորեն քննարկվում էր «Նաբուկկո» ծրագիրը, որին հետագայում փոխարինեց Հարավային գազային միջանցքը: Այսինքն՝ արդեն ձևավորվում էր Հայաստանի մեկուսացման տարածաշրջանային քարտեզը, որը հաղթահարելու համար նախաձեռնվեցին Թուրքիայի հետ հարաբերությունների կարգավորման և Իրանի հետ ենթակառուցվածքային ծրագրերի իրականացման գործընթացները:

Ինչպես արդեն նշվեց, օբյեկտիվ պատճառներով չհաջողվեց այս երկու նախաձեռնությունները կյանքի կոչել, ինչի հետևանքով Հայաստանի Հանրապետությունը ստիպված էր գոյատևել և զարգանալ, հաղթահարել միջազգային տնտեսական ճգնաժամի բացասական հետևանքները, նույնիսկ տնտեսական աճ ապահովել այսպիսի շրջափակման պայմաններում: Բացի այդ, տարածաշրջանային մեկուսացումը հնարավոր եղավ մեղմել վարվող փոխլրացման արտաքին քաղաքականության շնորհիվ:

1.2. ՀՀ արտաքին անվտանգության նախորդ ռազմավարությունը

Ըստ 2007թ. ռազմավարության՝ ՀՀ արտաքին անվտանգությունը խարսխված էր փոխլրացման և ներգրավվածության սկզբունքների վրա: Սա պայմանավորված է երկրի բարդ աշխարհաքաղաքական դիրքով և տարածաշրջանում տարբեր շահեր հետապնդող մի շարք ուժային կենտրոնների ազդեցությամբ: Այս քաղաքականությունը հնարավորություն է տվել զսպելու երկու հարևանների հետ փակ սահմանների և Արցախյան հակամարտության, Հայաստանը շրջանցող տարածաշրջանային նախագծերի առկայության բացասական հետևանքները:

Պետք է նշել, որ 2007-ին դեռևս այս աստիճան լարված չէին ՌԴ-Արևմուտք հարաբերությունները, որոշ հարցերի շուրջ երկու բևեռները նույնիսկ համագործակցության եզրեր էին գտնում, ուստի նման աշխարհաքաղաքական իրողությունների առկայությունը փոխլրացման քաղաքականության համար լավ պայմաններ էին ապահովում: Նույնը կարելի է ասել ԱՄՆ-Իրան, ԱՄՆ-ՉԺՀ հարաբերությունների մասին: Հենց այսպիսի միջավայրի առկայությունն է հնարավորություն տվել անդամակցել ԵԱՏՄ-ին և ԵՄ-ի հետ կնքել Համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագիրը, լինելով ՀԱՊԿ-ի անդամ՝ զարգացնել հարաբերությունները ՆԱՏՕ-ի հետ և մասնակցել այդ կառույցի կազմակերպած մի շարք միջոցառումներին, լավ հարաբերություններ պահպանել ինչպես Իրանի, Չինաստանի, այնպես էլ ԱՄՆ-ի, ինչպես ՌԴ-ի, այնպես էլ Վրաստանի, ԵՄ-ի հետ:

Վերջին տարիներին գլոբալ ու տարածաշրջանային իրողությունների փոփոխությունը, սակայն, ավելի խոցելի են դարձրել փոխլրացման քաղաքականության ճկունությունը: Մեծ է հավանականությունը, որ ԱՄՆ-Իրան, ԱՄՆ-ՌԴ և հատկապես վերջին մի քանի տարիներին ակներև դարձող ԱՄՆ-ՉԺՀ խորացող հակասությունները ի վերջո տարածաշրջանի երկրներին աշխարհաքաղաքական ընտրության առաջ կկանգնեցնեն: Եթե այժմ դեռ առկա է խուսանավելու որոշակի դաշտ, ապա նույնը դժվար է կանխատեսել միջնաժամկետ և երկարաժամկետ հեռանկարում:

2. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՆԵՐԿԱՅԻՍ ԱՐՏԱՔԻՆ ԱՆՎՏԱՆԳԱՅԻՆ ՄԻՋԱՎԱՅՐԸ

Հայաստանի արտաքին անվտանգային միջավայրն ուսումնասիրելիս հարկավոր է այն դիտարկել երկու հարթությունների վրա՝ գլոբալ և տարածաշրջանային. ընդ որում, տարածաշրջանային հարթությունն ընդգրկում է ոչ միայն Հարավային Կովկասը, այլև Մեծ Մերձավոր Արևելքը:

2.1. Գլոբալ անվտանգային միջավայրը

2007-ից ի վեր գլոբալ աշխարհաքաղաքական միջավայրը մեծ տրանսֆորմացիայի է ենթարկվել: Եթե 2007թ. նոր սկսել էր աճել լարվածությունը ՌԴ-Արևմուտք հարաբերություններում, ապա այժմ Ռուսաստանը գտնվում է արևմտյան խիստ տնտեսական պատժամիջոցների ներքո, տարբեր աշխարհաքաղաքական հարցերի շուրջ երկու կողմերը ունեն իրարամերժ դիրքորոշումներ, ինչը ընդհանուր առմամբ մեծացնում է գլոբալ անվտանգային միջավայրի անկայունությունը: Այս հակասությունները արտացոլվում են աշխարհի տարբեր անկյուններում ծագող հակամարտությունների ժամանակ, որտեղ կողմերից յուրաքանչյուրը փորձում է հակադրվել մյուսին: Կարելի է համարել, որ ամեն ինչ սկսվեց ռուս-վրացական պատերազմով, այնուհետև շարունակվեց Ուկրաինայում, Սիրիայում, Լիբիայում, Վենեսուելայում և այլն:

Արևմուտքի և ՌԴ-ի կողմից ցանկացած պարագայում առճակատման մեջ մտնելու միտումը չափազանց վտանգավոր է բոլոր պոտենցիալ հակամարտությունների համար: Գաղտնիք չէ, որ Արցախյան հակամարտությունը եղել է այն եզակի խնդիրներից մեկը, որտեղ տարիներ շարունակ ՌԴ-ը և Արևմուտքը փորձել են շարժվել ոչ թե հակադրման, այլ համագործակցության ուղղությամբ: Հաշվի առնելով երկու աշխարհաքաղաքական բևեռների միջև լարվածության աճի միտումը՝ տարածաշրջանի երկրներից (հատկապես նրանցից, որոնցում առկա են չլուծված հակամարտություններ) պահանջվում է չափազանց զգուշավոր արտաքին քաղաքականություն վարել:

Վերջին տարիներին զգալիորեն ավելացել են նաև ԱՄՆ-ՉԺՀ հակասությունները, ինչը առաջին հերթին պայմանավորված է նախորդ տասնամյակներին Չինաստանում տեղ գտած տնտեսական թռիչքի և ԱՄՆ-ի հետ ընդհանուր աշխարհաքաղաքական հավասարակշռության հաստատման հանգամանքների հետ: Չինաստանը սկսել է հանդես գալ ավելի ակտիվ արտաքին քաղաքական նախաձեռնություններով, որի անկյունաքարը կարելի է համարել «Մեկ

գոտի, մեկ ճանապարհ» ծրագիրը: ԱՄՆ-ՉԺՀ հակամարտությունը սկսեց նկատվել դեռևս ԱՄՆ նախորդ նախագահ Բարաք Օբամայի պաշտոնավարման 2-րդ փուլում, իսկ Թրամփի կառավարման ժամանակահատվածում այն թևակոխեց ավելի խրոնիկ և ցայտուն հակասությունների շրջափուլ, որը դրսևորվեց առևտրային պատերազմներով, պատժամիջոցներով և տարբեր աշխարհաքաղաքական հարցերի շուրջ երկու կողմերի հոետորաբանության կոշտացմամբ:

Համաձայն մի շարք հեղինակավոր փորձագետների գնահատականների և կանխատեսումների՝ վերջին տարիներին աշխարհը թևակոխել է էական տրանսֆորմացիաների մի ժամանակաշրջան, երբ փլուզվում են միաբևեռ աշխարհակարգի վերջին անկյունաքարերը և հետզհետե անցում է կատարվում բազմաբևեռ աշխարհակարգի՝ ԱՄՆ-ի և ՉԺՀ-ի հարաբերական գերակայության, ինչպես նաև ռեգիոնալ դերակատարների ազդեցության մեծացման պայմաններում: Կորոնավիրուսի համաճարակը ավելի արագացրեց այս գործընթացը և մեծապես նպաստեց ԱՄՆ-ՉԺՀ հակասությունների խորացմանը: Եթե 2008-ի համաշխարհային ֆինանսական ճգնաժամը արագացրեց միաբևեռ աշխարհակարգի աստիճանական քայքայումը, ապա, ըստ տարբեր կանխատեսումների, կորոնավիրուսի հետևանքով ակնկալվող ֆինանսատնտեսական ճգնաժամը հանգեցնելու է աշխարհում ուժերի հավասարակշռության ավելի արագ փոփոխությունների և վերջնականապես սահմանափակելու է աշխարհաքաղաքական հարցերում ԱՄՆ-ի միահեծան գերակայության վերջին 30 տարիների իրողությունը:

Տեղեկատվական տեխնոլոգիաների և կապի միջոցների զարգացումը վերջին տարիներին ավելի խոցելի են դարձրել երկրների արտաքին անվտանգության համակարգերը: Դրանից բխող մարտահրավերները բազմաթիվ են. քաղաքացիների անձնական տվյալների պաշտպանության հարցեր, տեղեկատվական պատերազմներ, միջամտություն երկրների ներքին գործերին՝ ընդհուպ տեղեկատվական տեխնոլոգիաների օգտագործմամբ ընտրական գործընթացների վրա ներազդեցություն և հակաիշխանական շարժումների ձևավորում, բանկային, ֆինանսական համակարգերը կաթվածահար անելու վտանգներ, գաղտնի տեղեկատվության արտահոսք և այլն:

Ընդ որում, այս մարտահրավերները հատուկ են ոչ միայն փոքր երկրներին, դրանք լուրջ մտահոգության առարկա են դարձել նույնիսկ գերտերություններում՝ ԱՄՆ, ՌԴ, ԵՄ, ՉԺՀ և այլն: Համեմատած 2007-ին առկա իրավիճակի հետ, այժմ ՀՀ արտաքին անվտանգության կարևորագույն մարտահրավերներից մեկը հենց տեղեկատվական դաշտից բխող վտանգն է, հատկապես եթե հաշվի առնենք

Թուրքիայի և Ադրբեջանի կողմից իրականացվող ակտիվ հակահայկական տեղեկատվական արշավը:

Վերջին տասնամյակի ընթացքում էականորեն ավելացել է միջազգային ահաբեկչությունների քանակը, մարդկությունը բախվել է այնպիսի երևույթի, ինչպիսին Իսլամական Պետությունն է: Այս երևույթը հատկապես մեծ վտանգ է ներկայացնում Մերձավոր Արևելքի երկրների համար, որտեղ անկայունությունը խթանում է տարատեսակ ահաբեկչական կազմակերպությունների ի հայտ գալուն: Թեև Հայաստանի սահմանապահ ուժերը պատվով են իրականացնում իրենց գործառույթները՝ այդ թվում ռուս սահմանապահների հետ համագործակցության շնորհիվ, և մեծ մասամբ կարողացել են չեզոքացնել տարատեսակ ահաբեկիչների Հայաստան ներթափանցման փորձերը, սակայն կարևոր է չկորցնել զգոնությունը: Աճել են նաև զենքի, թմրանյութերի ապօրինի շրջանառության, թրաֆիքինգի հետ կապված սպառնալիքները՝ այդ թվում տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացման շնորհիվ, հետևաբար հարկավոր է այս իրողությունները նույնպես հաշվի առնել:

Վերջապես, ԿՈՎԻԴ-19-ը ի ցույց դրեց, թե գլոբալիզացիայի ներկայիս ընդգրկուն մակարդակի և տարբեր երկրների փոխկապվածության ու միմյանցից փոխադարձ կախվածության պայմաններում գլոբալ համավարակները ինչպիսի մեծ սպառնալիք կարող են ներկայացնել տարբեր երկրների անվտանգության համար: Այդ սպառնալիքները հատկապես ցայտուն են երևում անբարենպաստ տարածաշրջանային միջավայրում գտնվող երկրների, այդ թվում՝ Հայաստանի պարագայում: Համավարակի հետևանքով մի շարք երկրներում կիրառվող սահմանափակումները ավելի են խորացրել Հայաստանի առանց այդ էլ բարդ տարածաշրջանային մեկուսացումը:

2.2. Տարածաշրջանային անվտանգային միջավայրը

2007թ. համեմատ անվտանգային միջավայրը զգալիորեն փոխվել է թե՛ Անդրկովկասում, թե՛ Մերձավոր Արևելքում, թե՛ հետխորհրդային տարածաշրջանում: Այդ փոփոխությունների արդյունքում ոչ միայն պահպանվել են նախկին մարտահրավերները, այլև ի հայտ են եկել նորերը, որոնց համարժեք արտացոլումը անվտանգության ռազմավարության մեջ շատ կարևոր է:

Ռուս-վրացական պատերազմից, դրան հաջորդած զարգացումներից, Ապրիլյան պատերազմից, Հայաստանում տեղի ունեցած իշխանափոխությունից հետո Հարավային Կովկասում ուժերի դասավորվածությունը հետևյալն է.

Վրաստան

Վրաստանի արտաքին քաղաքականության հիմնական ուղղությունը միտված է ԵՄ-ին և ՆԱՏՕ-ին անդամակցությանը, թեև ի տարբերություն Սահակաշվիլու իշխանության տարիների՝ Վրաստանի ներկայիս իշխանությունները Ռուսաստանի հետ համագործակցության եզրեր փնտրելու քայլեր են ձեռնարկում: Ձգտելով անդամակցել ՆԱՏՕ-ին և ԵՄ-ին՝ Վրաստանը միևնույն ժամանակ բազմաթիվ տնտեսական թելերով կապված է ՌԴ-ի հետ, հետևաբար այդ երկրի ներկայիս ավելի պրագմատիկ իշխանությունները փորձում են վերականգնել ՌԴ-ի հետ համագործակցության կամուրջները: Ընդ որում, Վրաստանի իշխանությունները պատրաստ չեն դա անել ի հաշիվ Աբխազիայի և Հարավային Օսիայի հարցերում զիջումների, և այս ուղղությամբ շարունակում են հակադրվել Մոսկվային:

Միաժամանակ, 2019թ. հունիսին Թբիլիսիում տեղի ունեցած հակառուսական պոռթկումը ցույց տվեց, որ «Վարդերի հեղափոխությունից» ի վեր Վրաստանում որոշ ուժերի կողմից իրականացված հակառուսական տեղեկատվական արշավը տվել է իր պտուղները: Սա Վրաստանում ավելի արմատական ուժերին և արտաքին ազդեցության ենթակա ՀԿ-ներին հնարավորություն է տալիս զսպել Ռուսաստանի հետ մերձեցման փորձերը: Միաժամանակ, երկրում հակառուսական ուժերի առկայությունը արտաքին ուժերի համար Վրաստանի ներքաղաքական դաշտը կառավարելու որոշակի լծակներ է ստեղծում:

Վրաստանում վերջին տարիներին զգալիորեն ավելացել է թուրք-ադրբեջանական ազդեցությունը: ՌԴ-ի հետ լարված հարաբերությունները ավելի են մեծացնում Բաքվից և Անկարայից Վրաստանի կախվածությունը: Էներգետիկ կախվածության, ենթակառուցվածքների տեսանկյունից Ադրբեջանը այսօր անհամեմատ ավելի մեծ լծակներ ունի Վրաստանում, քան 2007-ին: Բազմիցս տեսել ենք, թե ինչպես է Ադրբեջանը գործի դնում ազդեցության իր բոլոր լծակները, երբ Վրաստանում ի նպաստ Հայաստանի որևէ իրադարձություն է տեղի ունենում: Մասնավորապես, ադրբեջանական քարոզչամեքենան ակտիվանում է, երբ Թբիլիսիում սկսում են խոսել Հայաստան-Ռուսաստան երկաթգծի շահագործման, Հայաստանի տարածքով իրանական գազի մատակարարման հեռանկարների մասին:

2008-ի իրադարձություններից հետո հայ-վրացական հարաբերություններում լրացուցիչ խնդիրներ են առաջացնում ազգերի ինքնորոշման և տարածքային ամբողջականության սկզբունքների վերաբերյալ միջազգային հարթակներում տեղի ունեցող բանավեճերը: Ադրբեջանը մեծ ջանքեր է գործադրում, որպեսզի Արցախյան

հակամարտությունը դնի Աբխազիայի և Օսիայի հակամարտությունների հետ նույն հարթության վրա՝ ընդգծելով էթնիկ հակամարտությունների կարգավորման սկզբունքների հարցում Վրաստանի և Ադրբեջանի շահերի «համընկնման» հանգամանքը: Այս նպատակով Ադրբեջանը օգտագործում է տարբեր՝ այդ թվում Արևելյան Գործընկերության, ԵԽԽՎ-ի, ԳՈՒԱՄ-ի հարթակները: Միաժամանակ չպետք է անտեսվի Վրաստանում ժողովրդագրական պատկերի փոփոխման մեզ համար ոչ այնքան բարենպաստ հանգամանքը. մասնավորապես, Ջավախքում և այլ հայաշատ շրջաններում հայկական համայնքի թվի կրճատումը և ադրբեջանական ու թուրքական համայնքի թվաքանակի աճն ու դիրքերի ամրապնդումը:

Եթե հաշվի առնենք Հայաստանում ռուսական ռազմաքաղաքի առկայության, ԵԱՏՄ-ին ու ՀԱՊԿ-ին Հայաստանի անդամակցության, հայ-ռուսական դաշնակցային հարաբերությունների փաստերը, ինչպես նաև վերոհիշյալ իրողությունները, կտեսնենք, որ 2007-ի համեմատ հայ-վրացական հարաբերությունների միջավայրը էական փոփոխությունների է ենթարկվել: Մի կողմից՝ Վրաստանի ներկայիս իշխանությունը աչքի չի ընկնում ակնհայտ հակառուսական քաղաքականությամբ, ինչպես Սահակաշվիլու կառավարման ժամանակաշրջանում, մյուս կողմից՝ ռուս-վրացական հակամարտությունը մտել է երկարատև և խրոնիկ շրջափուլ, որը դժվար թե կարճաժամկետ հեռանկարում էական փոփոխությունների ենթարկվի:

Ադրբեջան

Նավթի և գազի հսկայական պաշարների առկայությունը Ադրբեջանին աշխարհաքաղաքական բևեռների հետ հարաբերություններում խուսանավելու ավելի մեծ հնարավորություն է տալիս: Այդ երկրի անվտանգության ռազմավարությամբ սահմանված է, որ Ադրբեջանի ռազմավարական ընտրությունը ինտեգրումն է եվրո-ատլանտյան գոտի⁸: Լինելով ՆԱՏՕ-ի անդամ Թուրքիայի ռազմավարական դաշնակիցը՝ Ադրբեջանը այդ կառույցի հետ մերձենալու ջանքեր է գործադրում: Հարկ է նշել, որ հատկապես Աֆղանստանում ԱՄՆ-ի նախաձեռնած ռազմական գործողություններից հետո ՆԱՏՕ-ի համար Ադրբեջանի կարևորությունը որոշակիորեն աճեց, քանի որ Ադրբեջանի տարածքը օգտագործում էր դեպի Աֆղանստան ռազմական մատակարարումներ կազմակերպելու նպատակով: Այնուամենայնիվ, վերջին տարիների զարգացումները և Աֆղանստանից ամերիկյան զորքերի դուրսբերումը կարող են որոշակիորեն փոխել այս իրավիճակը:

⁸ NATIONAL SECURITY CONCEPT OF THE REPUBLIC OF AZERBAIJAN, 23 May 2007, <https://www.files.ethz.ch/isn/154917/Azerbaijan2007.pdf> (այցելվել է 05.08.2020թ):

Արևմուտքը նաև շահագրգռված է Ադրբեջանի էներգետիկ հնարավորությունների օգտագործմամբ՝ ելնելով սեփական աշխարհաքաղաքական շահերից: Խոսքը առաջին հերթին կասպյան նավթը և գազը Եվրոպա մատակարարելու մասին է, ինչը դիտարկվում է որպես Եվրոպայում Ռուսաստանի էներգետիկ ազդեցությունը զսպելու հնարավորություն: Պատահական չէ Արևմուտքի չափից մեծ հետաքրքրությունը ադրբեջանական «Հարավային գազային միջանցք» ծրագրի նկատմամբ: 2008թ. իրադարձություններից հետո Վրաստան-Ադրբեջան-Թուրքիա առանցքը դիտարկվում էր որպես Անդրկովկասում Ռուսաստանի ազդեցությունը զսպող գործոն, սակայն ներկայումս իրավիճակը փոքր-ինչ այլ է:

Սիրիայում տեղի ունեցող զարգացումների համատեքստում Ռուսաստանը զգալիորեն ամրապնդեց իր դիրքերը Մերձավոր Արևելքում, ինչի շնորհիվ տարածաշրջանի մի շարք երկրներ սկսեցին վերանայել իրենց հարաբերությունները ՌԴ-ի հետ: Ռուս-թուրքական մարտավարական մերձեցումը որոշակիորեն նպաստեց նաև Ադրբեջանի հետ ՌԴ-ի հարաբերությունների ջերմացմանը: Բացի այդ, Ադրբեջանը այժմ կարծես նույն եռանդով չի դիրքավորվում որպես տարածաշրջանում եվրոատլանտյան ուղղության հիմնական ջատագով, քանի որ նախ այդ «մենաշնորհը» անցել է Վրաստանին, իսկ մարդու իրավունքների և ժողովրդավարության հարցերով Արևմուտքի կողմից Բաքվի նկատմամբ ճնշումները Ալիևին ստիպում են այլընտրանք փնտրել Մոսկվայում: Միաժամանակ Ադրբեջանը փորձում է հնարամտորեն օգտվել Հայաստանի և Ռուսաստանի ղեկավարության միջև 2018-ի իշխանափոխությունից հետո պարբերաբար ի հայտ եկող հակասություններից և այս նպատակով որդեգրել է Ռուսաստանին սիրաշահելու քաղաքականություն:

Վերջին տասնամյակի ընթացքում Ադրբեջանը, այդ թվում՝ նավթադուլարների հաշվին, կարողացել է որոշակիորեն ամրապնդել իր դիրքերը տարբեր միջազգային հարթակներում, որոնք ակտիվորեն օգտագործում է հակահայկական քարոզչության նպատակներով: Ընդ որում, եթե որոշ հարթակներում, ինչպիսիք են ԵԽԽՎ, ԱԼԳ-ը, ԱՊՀ-ը և այլն, Հայաստանը կարողանում է հակադարձել Ադրբեջանի նման վարքագծին, ապա մի շարք այլ հարթակներում՝ «Չմիացման երկրների շարժում», «Իսլամական համագործակցություն», «Թուրքալեզու պետությունների համագործակցություն», ԳՈՒԱՄ և այլն, այդ հնարավորությունները խիստ սահմանափակ են: Հատկանշական է, որ Ադրբեջանը միջազգային ակտիվություն է դրսևորում նաև համավարակային վերջին ամիսների ընթացքում՝ տարբեր միջազգային հարթակներում, երկկողմ և բազմակողմ ձևաչափով նախաձեռնելով և ակտիվորեն ներգրավելով առցանց քննարկումներին և գազաթնաժողովներին:

Նմանատիպ բոլոր հարթակներում Ադրբեջանը առիթը բաց չի թողնում հակահայկական քարոզչություն իրականացնելու համար:

Ինչ վերաբերում է էներգակիրների վաճառքից ստացվող Ադրբեջանի եկամուտներին և վերջինիս կողմից հրահրված սպառազինությունների մրցավազքին, ապա այս առումով դժվարին փուլը 2010-2014 թվականներն էին, երբ նավթի բարձր գների ու արտահանման մեծ ծավալների շնորհիվ Ադրբեջանի նավթային պետական ընկերությունը հսկայական եկամուտներ էր ստանում, որի զգալի մասը ուղղում էր նոր սպառազինությունների ձեռքբերմանը: Ինչպես գիտենք, Հայաստանը կարողացավ այդ ժամանակահատվածում զսպել Ադրբեջանի առավելությունը՝ ձեռք բերելով ռազմավարական զսպման մի շարք զինատեսակներ: Այժմ, նավթի արտահանման ծավալների և միջազգային գների անկման հետևանքով Ադրբեջանը ստիպված է սպառազինությունների ձեռքբերման ավելի համեստ քաղաքականություն վարել, ինչը, սակայն, չի նշանակում, որ Բաքուն չի շարունակում արագ տեմպերով զինվել:

Առհասարակ գոյություն ունի մի պարզ ճշմարտություն. նպաստավոր տնտեսական պայմանների՝ մասնավորապես նավթի բարձր գների առկայության պարագայում Ադրբեջանը ակտիվորեն զինվում է, իսկ այդպիսի պայմանների բացակայության ժամանակ սանձազերծում է ռազմական գործողություններ և կիրառում ձեռք բերած զինատեսակները: Այս տրամաբանությունը մշտապես նկատվել է Բաքվի գործողություններում և այն հատուկ է ոչ միայն Ադրբեջանին, այլև նման պայմաններում գտնվող մի շարք մերձավորարևելյան երկրների:

Այժմ Ադրբեջանում նավթի արդյունահանման ծավալներն ու միջազգային գները որոշակիորեն կայունացել են, բացի այդ Ադրբեջանը զգալիորեն ավելացրել է գազի արտահանման ծավալները: Սա թույլ է տալիս ենթադրել, որ Ադրբեջանը շարունակելու է էներգակիրների վաճառքից կայուն եկամուտներ ստանալ, հետևաբար շարունակելու է զինվել նոր զինատեսակներով: Սպառազինությունների ոլորտում հավասարակշռությունը պահպանելու համար չափազանց կարևոր է, որ Հայաստանը կարողանա համարժեք զինատեսակներ ձեռք բերել՝ առաջին հերթին ՌԴ-ի հետ ՀԱՊԿ-ի շրջանակներում համագործակցության և արտոնյալ պայմաններով վարկերի շնորհիվ:

Ինչ վերաբերում է Ադրբեջանի ներքաղաքական իրադրությանը, ապա վերջին տարիներին այնտեղ ավելի է ամրապնդվել կլանային և ավտորիտար պետական համակարգը, որն իր վերջին արտացոլումը ստացավ տարեսկզբին տեղի ունեցած արտահերթ խորհրդարանական ընտրությունների ժամանակ: Այս իրավիճակը,

բնականաբար, ժամանակ առ ժամանակ Ալիևի հակառակորդների ընդվզման պոռթկումներն է առաջացնում, որոնք զսպելու համար վերջինս օգտվում է փորձված մեթոդից՝ հրահրելով սադրիչ գործողություններ Արցախյան ճակատում և կոշտացնելով հակահայկական հռետորաբանությունը: Այս քաղաքականության վերջին դրսևորումներն էին հուլիսի 12-ին հայ-ադրբեջանական սահմանին Բաքվի նախաձեռնած հերթական ռազմական սադրանքը և դրան հաջորդած իրադարձությունները:

Հաշվի առնելով Ադրբեջանում տեղի ունեցող վերջին զարգացումները, որոնք մի շարք փորձագետների կարծիքով իշխանության տրանսֆորմացիայի և Մեհրիբան Ալիևայի ազդեցության էլ ավելի մեծացման նպատակ են հետապնդում, նմանատիպ սադրանքները պարբերական բնույթ են կրելու: Դրան նպաստում են նաև կորոնավիրուսի համաճարակի և նավթի համաշխարհային գների անկման արդյունքում երկրում առկա և սպասվող սոցիալ-տնտեսական ցնցումները, տարածաշրջանում ստեղծված բարդ իրադրությունը և Թուրքիայի ապակայունացնող քաղաքականությունը:

Թուրքիա

Եթե 2007-2008թթ. Թուրքիան ձգտում էր Անդրկովկասում գերակայող դիրք գրավել և այդ նպատակին հասնելու համար նույնիսկ տեղի ունեցավ Հայաստանի հետ հարաբերությունները կարգավորելու փորձ, ապա ռուս-վրացական պատերազմը ցույց տվեց, որ Մոսկվան չի պատրաստվում հեշտությամբ զիջել տարածաշրջանում իր դիրքերը: Լինելով տարածաշրջանում ՆԱՏՕ-ի անդամ ամենահզոր բանակն ունեցող երկիրը, Թուրքիան վերջին տարիներին փորձում է ավելի անկախ քաղաքականություն վարել, Անկարայի շահերը ոչ միշտ են համընկնում ՆԱՏՕ-ի քաղաքական գծին: Թուրքիայի ներգրավումը սիրիական հակամարտությանը վերջինիս ստիպեց շեղվել այդ հակամարտության ժամանակ ՆԱՏՕ-ի որդեգրած ընդհանուր ռազմավարությունից. Արևմուտքի՝ հատկապես քրդերի հետ կապված քաղաքականությունը հակասում էր Թուրքիայի հեռահար ծրագրերին, ուստի Անկարան սկսեց սեփական խաղը խաղալ և համագործակցել սիրիական հակամարտության այլ մասնակիցների հետ:

Թուրքիայի արտաքին քաղաքականությունը էական տրանսֆորմացիայի ենթարկվեց 2016-ին այդ երկրում տեղի ունեցած ռազմական հեղաշրջման փորձից հետո: Չնայած Թուրքիայի ԶՈՒ-ի կողմից ռուսական ինքնաթիռի խոցումից հետո երկկողմ հարաբերություններում ստեղծված լարվածությանը՝ Աբդուլլահ Գյուլենի հետ

կապված հակասությունները ԱՄՆ-ի հետ և հեղաշրջման փորձի ժամանակ ՌԴ-ի ցուցաբերած օժանդակությունը Էրդողանին հնարավորություն տվեցին երկրի արտաքին քաղաքականությունը որոշակի փոփոխությունների ենթարկել: Արդյունքում, թեև մի շարք կարևոր հարցերի շուրջ Անկարայի և Մոսկվայի շահերը շարունակում են հակասել միմյանց, այնուամենայնիվ երկու երկրները խորացրին համագործակցությունը տարբեր ոլորտներում: Թուրքիային Ս-400-ների մատակարարումը, Սիրիայի հարցով ՌԴ-Իրան-Թուրքիա համագործակցությունը, Ռուսաստանից դեպի Թուրքիա նոր գազատարի կառուցումը, Ռուսական ֆինանսավորմամբ Թուրքիայում նոր ատոմակայանի շինարարության մեկնարկը վկայում են երկու երկրների հարաբերությունների ջերմացման մասին:

Ռուս-թուրքական հարաբերություններում առկա իրավիճակը Հայաստանի համար ինչպես նոր ռիսկեր, այնպես էլ նոր հնարավորություններ է առաջ բերում: Սակայն այդ ռիսկերը ճիշտ գնահատելու և հնարավորություններից գրագետ օգտվելու համար հարկավոր է չափազանց պրագմատիկ քաղաքականություն վարել: ՀՀ անվտանգության նոր ռազմավարությունը մշակելիս ռուս-թուրքական հարաբերություններում առկա նոր իրողությունների ճշգրիտ գնահատումը հնարավորություն կտար կանխատեսել այդ երկրների հարաբերությունների զարգացման տարբեր սցենարները և ունենալ դրանց արձագանքելու հստակ ռազմավարական տեսլական:

Թուրքիան շարունակում է պահպանել իր հայատյաց վարքագիծը, որը Էրդողանի դիրքերի ամրապնդմանը և ազգայնական տարրերի ակտիվացմանը զուգահեռ ավելի ցայտուն դրսևորումներ է ստանում: Միաժամանակ, Անկարան սկսել է ավելի հաճախ միջամտել Արցախյան հակամարտության շուրջ տեղի ունեցող զարգացումներին և ավելի ընդգծել այս ուղղությամբ իր անվերապահ աջակցությունն Ադրբեջանին: Թուրքիան շարունակում է Հայոց ցեղասպանության ժխտողականության քաղականությունը և այս ուղղությամբ ակտիվ քարոզչական քայլեր է նախաձեռնում, այդ թվում՝ վերջերս այդ նպատակով հատուկ հանձնաժողովի ձևավորման միջոցով:

Ընդհանուր առմամբ, Թուրքիան շարունակում է մնալ տարածաշրջանում Հայաստանի անվտանգության գլխավոր սպառնալիքներից մեկը: Թուրքիան Հայաստանի համար անմիջական ռազմական սպառնալիք է ներկայացնում, որոնց մասին են վկայում Տավուշում տեղի ունեցած ռազմական գործողությունների ժամանակ Թուրքիայի ռազմաքաղաքական ղեկավարության վարքագիծը, նաև վերջերս գաղտնագերցված փաստաթղթերը՝ Հայաստանի վրա հարձակվելու

թուրքական զինված ուժերի պլանների մասին⁹: Թուրքիայից բխող սպառնալիքների չեզոքացմանն ուղղված քաղաքականությունը պետք է հստակ արտացոլվեր ՀՀ անվտանգության նոր ռազմավարության փաստաթղթում: Հարկավոր էր նաև ռազմավարական բնույթ հաղորդել Թուրքիայի հակահայկական քարոզչությանը և ժխտողականությանը հակազդելու Հայաստանի քաղաքականությանը:

Իրան

Ինչպես նշվեց, 2007-ի անվտանգության ռազմավարությունը մշակելիս մասնագետները կանխատեսել էին, որ Իրանի դեմ միջազգային պատժամիջոցները կարող են բացասական հետևանքներ ունենալ Հայաստանի համար, թեև այն ժամանակ դժվար էր պատկերացնել, թե հակաիրանական պատժամիջոցները ինչպիսի ծավալների կհասնեն: 2015թ. միջուկային գործարքի ճակատագիրը ցույց տվեց, որ ԱՄՆ-ի կողմից Իրանի դեմ տնտեսական ճնշման քաղաքականությունը առաջիկայում շարունակվելու է: Ընդ որում, Թրամփի վարչակազմը սկսել է ճնշում գործադրել Իրանի հետ համագործակցող բոլոր երկրների վրա:

Իրանի դեմ հնարավոր ռազմական գործողությունները և տարածաշրջանում Թեհրանի ազդեցությունը չեզոքացնելու փորձերը կարող են տարածաշրջանի երկրներին ռազմավարական ընտրության առաջ կանգնեցնել: Հայաստանը նույնպես վաղ թե ուշ բախվելու է այս խնդրի հետ:

Մյուս կողմից Սիրիայում ընթացող հակամարտությունը զգալիորեն աշխուժացրել է Իրան-ՌԴ համագործակցությունը: Իրանը ԵԱՏՄ-ի հետ կնքել է ազատ առևտրի պայմանագիր, առկա են տնտեսական նշանակության մի շարք ծրագրեր: Իրանի հետ բնականոն, նորմալ հարաբերությունների պահպանումն ու զարգացումը, ինչպես նաև ԵԱՏՄ-Իրան հարաբերություններում կապող օդակի դերակատարությունը նպաստում է Հայաստանի անվտանգության արտաքին միջավայրի կայունությանը:

Հայաստան

Տարածաշրջանում տեղի ունեցած փոփոխությունները չեն շրջանցել նաև Հայաստանը: Որքան էլ գործող իշխանությունները փորձում են 2018-ին Հայաստանում տեղի ունեցած քաղաքական փոփոխությունները ներկայացնել որպես նոր հնարավորությունների նախադրյալ, պետք է նշել, որ այդ փոփոխությունները իրենց

⁹ Turkey has a plan for the invasion of Greece, secret documents reveal, June 15, 2020, Abdullah Bozkurt, <https://www.nordicmonitor.com/2020/06/turkey-planned-to-invade-greece-secret-document-reveals/> (այցելվել է 05.08.2020թ):

հետ բերել են նաև մի շարք մարտահրավերներ: Գլխավոր մարտահրավերը բխում է անորոշությունից՝ արտաքին, ներքին, անվտանգային քաղաքականության հարցերում:

Թեև 2018թ. մայիսին տեղի ունեցած իշխանափոխությունից հետո հայտարարվեց, որ նոր իշխանությունները չեն փոխելու երկրի արտաքին քաղաքական վեկտորը, նման հավաստիացումները վստահություն չներշնչեցին ՀՀ արտաքին գործընկերներից շատերին: Այդ անվստահությունը տրամաբանական էր և մեծ մասամբ բխում էր իշխանությունների կադրային քաղաքականությունից, տարբեր մակարդակներում հնչեցրած հայտարարություններից, ինչպես նաև մի շարք հակասական գործողություններից: Օրինակները շատ են՝ ՀԱՊԿ-ի քարտուղարի հետ կապված իրավիճակը, ԵԽ-ում հայկական պատվիրակության հակառուսական քվեարկությունը, ՀՀ-ում ՌԴ դեսպանին ԱԳՆ հրավիրելն ու բացատրություն պահանջելը, Բոլթոնի երևանյան հայտարարություններին իշխանությունների տարակուսելի արձագանքը, ԵՄ-ի նկատմամբ վարչապետի դժգոհություններն ու ՀՀ-ԵՄ համաձայնագրի ճանապարհային քարտեզի գործարկման ձգձգումը, ԱՄՆ-ին քննադատելու մասին անզգույշ հայտարարությունները և այլն:

Ինչպես նշվեց, տարածաշրջանում առկա մարտահրավերներին համարժեք արձագանքելու համար Հայաստանի իշխանություններից պահանջվում է չափազանց պրագմատիկ քաղաքականություն վարել: Դրա համար հարկավոր է նախ և առաջ գործողությունների հստակություն և տարբեր հարցերում դիրքորոշումների պարզ և անկեղծ ներկայացում: Եթե իշխանությունների հակասական գործողությունները կարող են ինչ որ տեղ պատճառաբանվել անփորձությամբ, ապա անվտանգության նոր ռազմավարությունը պետք է ավելի հստակ լիներ՝ զերծ կամայական մեկնաբանությունների հնարավորությունից, ինչը թույլ կտար արտաքին դերակատարների համար լինել ավելի ընկալելի ու կանխատեսելի: Ցավոք, իրականությունն այլ է, և անվտանգության նոր ռազմավարությունը առաջացնում է ավելի շատ նոր հարցեր, քան պատասխանում արդեն իսկ առկա բազմաթիվ հարցերին:

3. ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՆՈՐ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՐՏԱՔԻՆ ԱՆՎՏԱՆԳԱՅԻՆ ՄԻՋԱՎԱՅՐԸ ՄԻՋՆԱԺԱՄԿԵՏ ՀԵՌԱՆԿԱՐՈՒՄ

Աշխատանքի այս հատվածում փորձենք վերլուծել հուլիսի 12-ին հրապարակված՝ ՀՀ ազգային անվտանգության նոր ռազմավարությունը, դրանում արտաքին անվտանգային միջավայրի, արտաքին սպառնալիքների վերաբերյալ տրված գնահատականներն ու առաջարկվող ռազմավարական լուծումները: Միաժամանակ անդրադառնանք Հայաստանի արտաքին անվտանգային միջավայրում միջնաժամկետ հեռանկարում ակնկալվող զարգացումներին և փոփոխություններին՝ փորձելով գնահատել, թե ընդունված ռազմավարությունը որքանով է դրանք հաշվի առել:

3.1. ՀՀ ազգային անվտանգության նոր ռազմավարությունը

Հուլիսի 12-ին ՀՀ անվտանգության խորհրդի նիստի ժամանակ ներկայացվեց ազգային անվտանգության նոր ռազմավարությունը¹⁰: Փաստաթղթում ի թիվս այլնի, փորձ է արվում նաև գնահատել երկրի արտաքին անվտանգային միջավայրում առկա իրավիճակը, արտաքին սպառնալիքներն ու դրանցից բխող ռազմավարական լուծումները:

Փաստաթղթի հեղինակները ներածության մեջ արդարացիորեն նշում են, որ «2007թ. ՀՀ ազգային անվտանգության առաջին ռազմավարության ընդունումից ի վեր միջազգային և տարածաշրջանային անվտանգային միջավայրը էական փոփոխություններ է կրել՝ Հայաստանի առջև ծառացած մարտահրավերները դարձնելով ավելի բարդ և բազմաշերտ»: Միաժամանակ փաստաթղթի հեղինակները նշում են, որ այս, ինչպես նաև Հայաստանում տեղի ունեցած փոփոխությունների արդյունքում ստեղծված իրողությունները «պահանջում են ունենալ նոր, ավելի հավակնոտ ազգային անվտանգության ռազմավարություն»: Սրանից կարելի է ենթադրել, որ նոր ռազմավարությունը պետք է ավելի համընդգրկուն գնահատականներ տար ՀՀ անվտանգային միջավայրին, առկա սպառնալիքներին և մարտահրավերներին, ինչպես նաև ավելի հստակ ու համապարփակ ռազմավարական լուծումներ առաջ քաշեր: Յավոք, փաստաթղթի հետագա ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ փաստաթղթի նախաբանում ներկայացված

¹⁰ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ, 10.07.2020թ, https://www.primeminister.am/u_files/file/Different/AA-Razmavarutyun-Final.pdf (այցելվել է 05.08.2020թ):

այս տրամաբանական նպատակադրումը այնքան էլ համահունչ չէ ողջ փաստաթղթի բովանդակությանը:

Քանի որ մեր ուսումնասիրության առարկան ՀՀ անվտանգության արտաքին անվտանգային բաղադրիչն է, անդրադառնանք նոր ռազմավարության մեջ այս ուղղությամբ ներկայացված գնահատականներին ու հայեցակարգային մոտեցումներին: Այսպես, փաստաթղթի ներածության մեջ նշվում է, որ «Հայոց պետականության գոյությունը կախված չէ աշխարհաքաղաքական հանգամանքներից, այլ բխում է հայ ժողովրդի կամքից»: Այս տարօրինակ ձևակերպումը ցույց է տալիս, որ հենց փաստաթղթի սկզբում փորձ է արվում թերագնահատել ՀՀ անվտանգության և գոյության տեսանկյունից աշխարհաքաղաքականության և աշխարհաքաղաքական իրողությունների դերը: Այս միտումը նկատվում է փաստաթղթի ողջ տեքստում:

Անշուշտ, յուրաքանչյուր պետության գոյությունը բխում է տվյալ պետության քաղաքացիների կամքից, սակայն միայն այդ կամքը բավարար չէ, եթե ճիշտ չեն գնահատվում աշխարհաքաղաքական իրողությունները և փորձում են այդ կամքը իրացնել ի հեճուկս այդ իրողությունների տրամաբանությանը: Որոշ դեպքերում նման քաղաքականությունը տարբեր ազգերի համար կործանարար հետևանքներ է ունենում, իսկ հայ ժողովրդի պատմության մի շարք դրվագներ այս ուղղությամբ մտորելու բավական մեծ դաշտ է բացում:

Փաստաթուղթը, անդարադառնալով Հայաստանի անվտանգային միջավայրին, սպառնալիքների շարքում նշում է, որ «Հայաստանի համար մտահոգիչ է տարածաշրջանում և աշխարհում ժողովրդավարության և մարդու իրավունքների ոլորտում արձանագրվող հետընթացը»: Հայաստանը հայտարարելով «ժողովրդավարության բաստիոն» և ժողովրդավարության գաղափարը դնելով արտաքին քաղաքականության հիմքերում՝ իշխանության կողմից փաստաթղթում նման ձևակերպման զետեղումը զարմանք չի առաջացնում, սակայն ի ցույց է դնում իրենց իսկ կողմից առաջ քաշվող սկզբունքների հակասությունը: Ակնհայտ է, որ նման ձևակերպումը վկայում է ինչպես գլոբալ գործընթացների, այնպես էլ տարածաշրջանային իրողությունների վերաբերյալ փաստաթղթի հեղինակների ոչ լիարժեք պատկերացումների մասին:

Մասնավորապես, Հայաստանը գտնվում է մի տարածաշրջանում, որտեղ մեր 4 հարևաններից երկուսում հաստատված են ավտորիտար-ազգայնական համակարգեր, երրորդը թեոկրատական պետություն է: Հայաստանի հիմնական

ռազմավարական դաշնակիցներին դժվար է համարել «ժողովրդավարության առաջամարտիկներ»: Ավելին, աշխարհաքաղաքական զարգացումների այսօրվա պրագմատիկ ընթացքը հուշում է, որ առաջիկայում ժողովրդավարության և մարդու իրավունքների խնդիրների դերը միջպետական հարաբերություններում նվազելու է:

Առհասարակ, փաստաթղթում Հայաստանի արտաքին անվտանգային միջավայրի նկարագրությունը թերի է և պարզունակ. բացակայում են տարածաշրջանում և աշխարհում տեղի ունեցող գործընթացների խորը և համընդգրկուն վերլուծությունը, կանխատեսումներն ու այդ համատեքստում Հայաստանի մոտեցումների ու հնարավոր վարքագծի նկարագրությունը: Հաշվի առնված չեն նաև Կորոնավիրուսի համաճարակի հետևանքով աշխարհում տեղի ունեցող փոփոխությունների գործընթացի արագացման, միջազգային դերակատարների միջև ուժերի հարաբերակցության փոփոխության հանգամանքները:

Նոր ռազմավարության մեջ նշվում է, որ Հայաստանը իր միջազգային կշիռը մեծացնելու նպատակով օգտագործելու է նաև «փափուկ ուժը»՝ շեշտը դնելով մարդկային կապիտալի վրա: Ընդ որում, մարդկային կապիտալի ներուժը դիտարկվում է աշխարհասփյուռ հայության ուժերի մեկտեղման համատեքստում: Որպես ռազմավարական նպատակադրում՝ սա, իհարկե, ողջունելի է, սակայն տրամագծորեն հակասում է կառավարության վերջին 2 տարիների գործունեությանը: Մասնավորապես վարչապետը իր ելույթներում խոսում էր ավանդական համահայկական կառույցների հետ հակասությունների մասին, բավական բարդ հարաբերություններ են ձևավորվել իշխանության և սփյուռքի ազդեցիկ գործարարների, փորձագիտական և մեդիա (առաջին հերթին՝ ռուսաստանաբնակ) շրջանակների միջև: Ստեղծված իրավիճակը զգալիորեն խոչընդոտում է համահայկական ներուժը լիարժեքորեն օգտագործելու հնարավորությունը, այնինչ նորմալ հարաբերությունների պահպանումը հատկապես արտերկրում փորձագիտական և մեդիա շրջանակներում մեծ ազդեցություն ունեցող հայազգի գործիչների հետ, նկատելիորեն կավելացնեին Հայաստանի կողմից «փափուկ ուժի» օգտագործման հնարավորությունները, ինչի կարիքը զգացվեց հատկապես Տավուշի սահմանին վերջին լարվածության ժամանակահատվածում:

Անդրադառնալով Հարավային Կովկասում ռազմաքաղաքական դաշինքների ազդեցությանը՝ նշվում է, որ «տարածաշրջանային անվտանգության տեսանկյունից մտահոգում է այդ դաշինքների և դրանց մաս կազմող երկրների միջև տարածայնությունների հնարավոր խորացումը»: Այնուհետև նշվում է, որ «նույնքան

վտանգավոր են այս դաշինքների թուլացումը և անդամ պետությունների միջև միմյանց՝ այդ թվում ՀՀ շահերին հակասող գործողությունները»: Այս համատեքստում հատուկ շեշտվում է Ադրբեյջանին զենքի վաճառքի հանգամանքը:

Նախ պետք է նշել, որ Հարավային Կովկասում ազդեցություն վայելող հիմնական ռազմաքաղաքական դաշինքները 2-ն են՝ ՀԱՊԿ-ը և ՆԱՏՕ-ն: Ընդ որում, այդ կառույցների հետ ուղղակի կապ ունեն (անդամակցում են) տարածաշրջանի երկրներից միայն 2-ը՝ Հայաստանը՝ ՀԱՊԿ-ին, Թուրքիան՝ ՆԱՏՕ-ին: Այսինքն՝ ՀԱՊԿ-ի և ՆԱՏՕ-ի միջև տարածայնությունների խորացումը առաջին հերթին կարող է ազդել Թուրքիայի և Հայաստանի հարաբերությունների վրա, ուստի ըստ տրամաբանության՝ Հայաստանը պետք է շահագրգիռ լինի տարածաշրջանում ՀԱՊԿ-ի ազդեցության ամրապնդմամբ:

Այնուհետև, ինչպես 2007թ. ռազմավարության մեջ, նոր փաստաթղթում նույնպես նշվում է այդ ռազմաքաղաքական դաշինքների թուլացումից և անդամ պետությունների՝ միմյանց շահերին հակասող գործողություններից բխող սպառնալիքների մասին, սակայն ի տարբերություն նախորդ ռազմավարությանը՝ այս անգամ ուղակի հիշատակվում է միայն Ադրբեյջանին զենքի վաճառքի հանգամանքը: Մինչդեռ ՀԱՊԿ-ի ամրապնդման տեսանկյունից նույնքան կարևոր է, որ Հայաստանը նույնպես իր գործադրություններով չհակասի կառույցի և դրա անդամ պետությունների շահերին: Ռազմավարության մեջ այս ուղղությամբ Հայաստանի հստակ տեսլականը արտացոլված չէ, ինչպես նաև տրված չեն գնահատականներ՝ նախկինում կատարված քայլերի մասով: Առհասարակ, փաստաթղթում պատշաճ ձևով ներկայացված չէ տարածաշրջանային կայունության տեսանկյունից ՀԱՊԿ-ի դերակատարությունը և այդ կառույցի հետ հարաբերությունների զարգացման տեսլականը:

ՆԱՏՕ-ի հետ համագործակցության մասով նոր ռազմավարության մեջ նշվում է, որ «շարունակելու ենք ՆԱՏՕ-ի հետ քաղաքական երկխոսությունը պաշտպանության և անվտանգության բնագավառներում՝ որպես Հայաստանի պաշտպանական կարողությունների զարգացման բաղադրիչ»: Նաև շեշտադրվում է այդ համագործակցության կարևորությունը միջազգային խաղաղության ամրապնդման տեսանկյունից, սակայն ի տարբերություն նախորդ ռազմավարության, չի նշվում, թե որոնք են այդ համագործակցության հիմքերը, ինչպիսին են դրա վերաբերյալ հայկական կողմի ակնկալիքներն ու տեսլականը:

Ռազմավարության մեջ անդրադառնալով բազմակողմ դիվանագիտության կարևորությանը, որևէ անդրադարձ չի կատարվում այն հարցին, թե Հայաստանը

ինչպես է դիրքավորվելու այնպիսի կարևոր միջազգային հարթակներում և միջազգային կազմակերպությունների հետ հարաբերություններում, ինչպիսիք են Չմիացած երկրների շարժման, Իսլամական համագործակցության կազմակերպությունները՝ հաշվի առնելով այս կառույցներում հաճախ հակահայկական բանաձևերի ընդունումն ու դրանից բխող սպառնալիքները: Փաստաթղթում գնահատված չեն այս և այլ միջազգային կարևոր հարթակներում Թուրքիայի և Ադրբեյջանի հակահայկական գործողություններից բխող վտանգները, դրանք զսպելու ռազմավարությունը:

Առհասարակ, ի տարբերություն 2007թ. ռազմավարության, նոր փաստաթղթում բացակայում են ՀՀ անվտանգային միջավայրում առկա իրավիճակի հստակ գնահատականներն ու կանխատեսումները: Չափազանց փոքր ուշադրություն է դարձվել տարածաշրջանում և աշխարհում տեղի ունեցած զարգացումներին, ձևավորված ուժերի հավասարակշռությանը: Անհրաժեշտ չափով ներկայացված չեն նաև հարևաններ Իրանի և Վրաստանի հետ հարաբերություններում առկա իրավիճակը և այդ հարաբերությունների զարգացման տեսլականը:

Նոր փաստաթղթում նշվում է, որ Հայաստանն իր արտաքին քաղաքական առաջնահերթություններն իրականացնում է երեք հիմնարար, համալիր և փոխկապակցված սկզբունքների հիման վրա՝ ինքնիշխանություն, համահայկականություն, փոխգործակցություն: Այսինքն, եթե 2007-ին արտաքին քաղաքականության հիմքերում դրվում էին փոխլրացման և ներգրավվածության սկզբունքները, որոնք թեև լայն և ընդհանրական ձևակերպումներ էին, սակայն ընդհանուր առմամբ հնարավորություն էին տալիս պատկերացում կազմել արտաքին քաղաքականության ընդհանուր ուղղվածության մասին, ապա նոր ռազմավարության մեջ նշված սկզբունքները ավելի անորոշ են և չեն հստակեցնում արտաքին քաղաքականության առաջնահերթությունները:

Այսպես, ինքնիշխանությունը, հանդիսանալով անկախ պետության գոյության ատրիբուտներից մեկը, ինքնին չի կարող համարվել արտաքին քաղաքականության սկզբունք: Մյուս կողմից՝ այսօրվա գլոբալ և փոխկապակցված աշխարհում ինքնին շատ անորոշ են հենց ինքնիշխանության չափորոշիչները, հետևաբար չի կարող հստակ լինել այդ սկզբունքի վրա հիմնված արտաքին քաղաքականությունը: Մյուս կողմից, պետությունները, անդամակցելով մի շարք վերազգային կազմակերպությունների, ինքնակամորեն հրաժարվում են ինքնիշխանության որոշ ատրիբուտներից, և Հայաստանը նույնպես բացառություն չէ: Ինքնիշխանությունը արտաքին քաղաքական սկզբունք հռչակելու պարագայում Հայաստանը

պատրաստվում է արդյոք հրաժարվել իր ստանձնած նմանատիպ պարտավորություններից:

Համահայկականությունը նույնպես դժվար է պատկերացնել որպես արտաքին քաղաքականության հիմնարար սկզբունք: Ինքնին համահայկականության գաղափարը կարող է նպաստել արտաքին քաղաքականության հիմնարար սկզբունքների իրականացմանը. օրինակ՝ համահայկականության գաղափարը նաև էապես նպաստում է փոխլրացման սկզբունքի վրա հիմնված արտաքին քաղաքականությանը, քանի որ հնարավորություն է տալիս աշխարհասփյուռ հայության ներուժը օգտագործել որպես տարբեր ուժային կենտրոնների և երկրների հետ շահերի համադրման և արդյունավետ համագործակցության զարգացման գործիք: Սակայն այն չի կարող լինել արտաքին քաղաքականության ինքնուրույն հիմնարար սկզբունք:

Մյուսը նշվում է փոխգործակցության սկզբունքը, որն ավելի անորոշ է, քան փոխլրացման սկզբունքը: Աշխարհի գրեթե բոլոր երկրների փոխհարաբերությունները կառուցված են փոխգործակցության սկզբունքի հիման վրա, և եթե որևէ երկիր սահմանում է իր արտաքին քաղաքականության հիմնարար սկզբունքները, ապա դրանց նկարագրությունը պետք է գտնե հնարավորություն տա հասկանալու, թե որն է լինելու տվյալ երկրի արտաքին քաղաքականության առանձնահատկությունը: Այս պարագայում փաստաթղթում փոխգործակցությունը նկարագրվում է որպես պետությունների հետ իրավահավասար և փոխշահավետ հարաբերությունների կայացման միջոց:

Առավել ուշագրավ է այն հանգամանքը, որ ինքնիշխանության, համահայկականության և փոխգործակցության սկզբունքները ներկայացվում են որպես հիմնարար, համալիր և փոխկապակցված: Դժվար է գտնել այդ սկզբունքների միջև փոխկապակցվածության գործոնները, մինչդեռ որոշ սկզբունքներ նույնիսկ միմյանց հակասում են: Այսպես, համահայկականության գաղափարը դժվար է համադրել ինքնիշխանության գաղափարի հետ, քանի որ առաջինը ենթադրում է համահայկական ներուժի՝ այդ թվում աշխարհասփյուռ հայության հնարավորությունների օգտագործում, ինչը իր հերթին ենթադրում է ինքնիշխանության որոշ տարրերի զիջում՝ ի նպաստ համահայկական օրակարգի:

Պատահական չէ, որ արտաքին քաղաքական սկզբունքների անորոշությունը փաստաթղթում դրսևորվում է նաև տարբեր հարցերի ու խնդիրների վերաբերյալ տրված գնահատականներում: Օրինակ՝ փաստաթղթում նշվում է, որ «Թուրքիան

կղադարի անվտանգության սպառնալիք լինել մեզ համար այն դեպքում, երբ կվերանայի Հայաստանի և հայ ժողովրդի նկատմամբ իր ոչ բարիդրացիական քաղաքականությունը»: Դժվար է բնորոշել, թե ինչն է նշանակում Թուրքիայի կողմից Հայաստանի նկատմամբ ոչ բարիդրացիական քաղաքականության վերանայում, արդյո՞ք այն ենթադրում է նաև Հայոց ցեղասպանության ճանաչումն ու հետևանքների վերացումը:

Փաստաթղթում անդրադարձ չի կատարվում վերջին տարիներին Նախիջևանում Թուրքիայի կողմից սեփական ներկայությունն ամրապնդելու փորձերին և դրանից բխող սպառնալիքներին: Առհասարակ, նոր ռազմավարությունն ընթերցելիս տպավորություն է ստեղծվում, որ հեղինակները պատշաճ ձևով չեն գնահատել Թուրքիայից բխող սպառնալիքների ողջ սպեկտորը, վերջին տարիներին վերջինիս գործողությունների վտանգները: Բացակայում են նաև այդ սպառնալիքներին հակազդելու նպատակով առաջարկող ռազմավարական լուծումները:

Ի տարբերություն նախորդ ռազմավարության՝ նոր փաստաթղթում Թուրքիայի կողմից Հայաստանի շրջափակումը չի դիտարկվում որպես Հայաստանի դեմ ուժի կիրառում: Միայն նշվում է հարևան երկրների նկատմամբ Թուրքիայի կողմից անօրինական ուժի կիրառման վտանգների մասին, սակայն այդ համատեքստում չի նշվում, որ Հայաստանի շրջափակումը նույնպես անօրինական ուժի կիրառման դրսևորում է: Առհասարակ նոր փաստաթղթում Թուրքիային և վերջինիս գործողություններին տրված բնորոշումներն ու ձևակերպումները չափազանց «փափուկ» են և չեն արտացոլում այդ երկրից բխող իրական սպառնալիքները:

Մեկ այլ դրվագում նշվում է, որ ՀՀ արտաքին քաղաքականության առաջնահերթություններից է ՌԴ-ի հետ ռազմավարական-դաշնակցային հարաբերությունների ընդլայնումը մի շարք ոլորտներում, սակայն փաստաթղթում բացակայում է երկկողմ հարաբերությունների զարգացման տեսլականը, այն մեխանիզմները, որոնք հնարավորություն կտան ապահովել այդ զարգացումը: Անհրաժեշտ ձևով ներկայացված չէ նաև ՌԴ դերակատարությունը տարածաշրջանում անվտանգության և կայունության ապահովման հարցում: Ի տարբերություն նախորդ ռազմավարության, որևէ ձևով անդրադարձ չի կատարվում Հայաստանում գործող ռուսական ռազմաբազային, Հայաստանի միջազգային սահմաններին հայ-ռուսական համատեղ մարտական հերթապահությանը, հայ-ռուսական միացյալ զորախմբին, տարածաշրջանային կայունության և Հայաստանի անվտանգության տեսանկյունից վերջիններիս դերակատարությանը:

Նոր ռազմավարության մեջ շատ հակիրճ է նկարագրվում ՀՀ-ԵՄ հարաբերությունները, թեև 2017-ին վերջինիս հետ Համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագրի ստորագրումից հետո բացվել է երկկողմ համագործակցության լայն շրջանակ: Անհրաժեշտ ձևով նկարագրված չէ այդ համաձայնագրի և առհասարակ ՀՀ-ԵՄ համագործակցության կարևորությունը Հայաստանի անվտանգության, տարածաշրջանում կայունության, արտաքին քաղաքականության հավասարակշռման տեսանկյունից: Փոխարենը փաստաթղթում նշվում է, որ «Հայաստանն առանձնահատուկ կարևորություն է տալիս Ֆրանսիայի և Գերմանիայի հետ համագործակցության ամրապնդմանը և զարգացմանը»: Անշուշտ ակնհայտ է, որ Գերմանիան և Ֆրանսիան ԵՄ-ի ամենաազդեցիկ երկրներն են, և վերջիններին հետ հարաբերությունները առանձնահատուկ կարևորություն ունեն, սակայն անվտանգության ռազմավարության մեջ անդրադառնալով ԵՄ-ի հետ հարաբերություններին և առանձնացնելով այս երկու պետություններին՝ Հայաստանը կարող է անհասկանալի ուղերձ հղել ԵՄ անդամ մյուս երկրներին:

Փոխարենը, հաշվի առնելով Ֆրանսիայի՝ ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահ հանդիսանալու և Արցախյան հակամարտության կարգավորման գործընթացում ունեցած կարևոր դերի հանգամանքը, ինչպես նաև հայ-ֆրանսիական ավանդական բարեկամական հարաբերությունները՝ այդ թվում Ֆրանկոֆոնիայի միջազգային կազմակերպության շրջանակներում, միգուցե կարելի էր առանձնահատուկ ձևով շեշտադրել Ֆրանսիայի հետ համագործակցությունը, բայց ոչ ուղղակիորեն ՀՀ-ԵՄ հարաբերությունների համատեքստում: Միաժամանակ, փաստաթղթում կարծես հաշվի չի առնվում Բրեքզիթի գործոնը և որևէ անդրադարձ չկա ՀՀ-Մեծ Բրիտանիա հարաբերություններին՝ չնայած տարածաշրջանում վերջինիս մեծ ազդեցությանը¹¹ և Լոնդոնի կարևոր աշխարհաքաղաքական դերակատարությանը:

Նոր ռազմավարության մեջ 2007թ. ռազմավարության համեմատ տարածաշրջանային քաղաքականության վերաբերյալ անդրադարձը չափազանց հակիրճ և անորոշ է: Խոսքը առաջին հերթին վերաբերում է անմիջական հարևանների հետ հարաբերությունների նկարագրության ու դրանց զարգացման հեռանկարների ուրվագծմանը: Այս անորոշությունն ու հեղիեղուկ ձևակերպումները անհնարին են

¹¹ ՄԵԾ ԲՐԻՏԱՆԻԱՅԻ ԱՐՏԱՔԻՆ-ԱՆՎՏԱՆԳԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀՆԱՐԱՎՈՐ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԲՐԵՔՉԻԹԻ ԳՈՐԾԸՆԹԱՅԻ ԱՎԱՐՏԻՑ ՀԵՏՈ. ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԸ ՀԱՐԱՎԿՈՎԿԱՍՅԱՆ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԻ ՀԱՄԱՐ, «ԼՈՒՅՍ հիմնադրամ», 19 Հունիսի 2020թ, <https://www.luys.am/img/artpic/small/81e50ac73961315b48d708-%D4%B2%D6%80%D5%A5%D6%84%D5%A6%D5%AB%D5%A9-2020-06-18-edited.pdf> (այցելվել է 05.08.2020թ):

դարձնում պետական ինստիտուտների կողմից անվտանգության ռազմավարությունից բխող հետագա գործողությունների գնահատումը:

Ի տարբերություն 2007-ի ռազմավարության՝ նոր փաստաթղթում առհասարակ շատ փոքր տեղ է հատկացված Իրանի և Վրաստանի հետ հարաբերություններին: Միայն շեշտադրվում է այդ երկրներում կայունության կարևորությունը, այնուհետև նշվում է, որ Հայաստանը զարգացնելու է վերջիններիս հետ փոխգործակցությունը՝ զերծ պահելով այդ հարաբերությունները աշխարհաքաղաքական կողմնակի ազդեցություններից: Փաստաթղթում փորձ չի արվում գնահատելու այդ երկրների, մասնավորապես՝ Իրանի շուրջ ստեղծված իրավիճակը, բացակայում է Իրանի և Վրաստանի հետ հարաբերությունների զարգացման տեսլականի առարկայական նկարագիրը:

Որևէ ձևով չի նշվում ԼՂ հակամարտության կարգավորման գործընթացում Իրանի ունեցած կարևոր դերակատարության մասին, որը չհանդիսանալով ՄԽ անդամ, տարիներ շարունակ շատ մեծ և կայունացնող դեր է խաղացել, և այսօր էլ այդ դերը մեծ է ինչպես Արցախյան հարցում, այնպես թուրք-ադրբեջանական տարածաշրջանային հավակնություններ զսպելու տեսանկյունից: Ռազմավարության մեջ չի նկատվում Իրանի դերի ընկալումը Հայաստանի էներգետիկ անվտանգության, հաղորդակցության ուղիների բազմազանության ապահովման հարցերում: Նոր ռազմավարության մեջ չափազանց հակիրճ են նկարագրված Հայաստանի անվտանգության տեսանկյունից Մերձավոր Արևելքի և դրա առանձին երկրների հետ հարաբերությունների կարևորությունը՝ հակառակ վերջին տարիներին այդ տարածաշրջանում տեղի ունեցած և շարունակվող բուռն զարգացումների: Որևէ անդրադարձ չի կատարվում Սիրիայում հայկական հումանիտար առաքելության գործընթացին և դրա նպատակներին:

Ողջունելի է ռազմավարության մեջ Հայաստան-Հունաստան-Կիպրոս եռակողմ համագործակցության ձևաչափի առանձնահատուկ ընդգծումը, սակայն հարկավոր էր այն ներկայացնել հատկապես Թուրքիայի տարածաշրջանային սպառնալիքի լույսի ներքո: Փաստաթղթում կարող էր նաև շեշտադրվել այս ձևաչափի շրջանակներում սփյուռքի ներուժի համատեղ օգտագործման կարևորությունը՝ որպես անվտանգության ապահովման և փափուկ ուժի կիրառման հարցում կարևոր գործոն:

Ինչպես արդեն նշվեց, Չինաստանը հավակնում է դառնալ փոփոխվող աշխարհակարգի 2 գլխավոր բևեռներից մեկը, և կարելի էր ակնկալել, որ աշխարհաքաղաքական զարգացումների ճիշտ գնահատման արդյունքում ՀՀ

անվտանգության նոր ռազմավարությունը պետք է ավելի մեծ տեղ հատկացնեի Չինաստանի հետ հարաբերություններին: Մինչդեռ ընդունված ռազմավարության մեջ Չինաստանի հետ հարաբերությունների նկարագրությունը սահմանափակվում է դրանց «արարողակարգային» հպանցիկ հիշատակմամբ: Չինաստանի և Հնդկաստանի հետ հարաբերությունների նկարագրությունը գրեթե նույն բովանդակությունն ունեն, այնինչ եթե 2007թ. ռազմավարության պարագայում նման մոտեցումը որոշակիորեն արդարացված էր, ապա այսօրվա աշխարհաքաղաքական իրողությունների պայմաններում այն անընդունելի է: Ակնհայտ է, որ այսօր աշխարհաքաղաքական ազդեցության տեսանկյունից Չինաստանն ու Հնդկաստանը ամբողջովին տարբեր «քաշային կատեգորիաներ» են ներկայացնում:

Փաստաթղթում որևէ անդրադարձ չի կատարվում Չինաստանի նախաձեռնած «Մեկ գոտի, մեկ ճանապարհ» խոշոր և աշխարհաքաղաքական կարևորություն ունեցող ծրագրին: Եթե նախկինում Չինաստանի նախաձեռնած այս կարևորագույն գործընթացի շրջանակներում անցկացվող միջոցառումների ժամանակ ՀՀ իշխանությունների ոչ համաչափ ներկայությունը և գործադրվող անհամարժեք ջանքերը կարող էին դիտարկվել փորձի պակասի համատեքստում¹², ապա անվտանգության ռազմավարության մեջ չինական նախաձեռնությանը առհասարակ չանդրադառնալը խոսում է իշխանությունների կողմից դրա նկատմամբ տոտալ անհետաքրքրության, ծրագրի աշխարհաքաղաքական նշանակությունը չհասկանալու մասին:

Փաստաթղթում առկա են նաև մի քանի տարօրինակ ձևակերպումներ, որոնք շտկման կարքի ունեն: Օրինակ նշվում է, որ Հայաստանի անվտանգային միջավայրի վրա ազդում են Մերձավոր Արևելքում կրոնական արմատականության ներուժի համախմբումն ու տարածումը: Այստեղ ակնհայտ է սխալ տերմինի օգտագործումը, քանի որ սպառնալիք կարող է լինել ոչ թե կրոնական (հաճախ օգտագործվում է իսլամական) արմատականությունը, այլ կրոնական ծայրահեղականությունը:

3.2. Հայաստանի արտաքին անվտանգային միջավայրը միջնաժամկետ հեռանկարում

ՀՀ անվտանգության նոր ռազմավարությունը մշակելիս չափազանց կարևոր էր ոչ միայն ճիշտ գնահատել Հայաստանի շուրջ ներկայիս անվտանգային միջավայրը,

¹² «Մեկ գոտի՝ մեկ ճանապարհ» ծրագիրը և դրանում Հայաստանի անորոշ դերակատարությունը, «ԼՈՒՅՍ հիմնադրամ», 07 օգոստոսի 2019թ, <https://www.luys.am/index.php?m=publicationsOne&pid=98> (այցելվել է 05.08.2020թ):

այլև կանխատեսել, թե այն ինչպիսի փոփոխությունների կենթարկվի ապագայում: Անվտանգության նախորդ ռազմավարությունը դեռ 2007-ին կանխատեսել էր մի շարք զարգացումներ, որոնք հետագայում իրականություն դարձան: Դրա շնորհիվ ապահովվել է երկրի բնականուն զարգացումը՝ անկախ ի հայտ եկած մարտահրավերների մասշտաբներից: Նոր ռազմավարության մեջ վերլուծական և կանխատեսման աշխատանքը գրեթե բացակայում է:

Հարավային Կովկասում և Մերձավոր Արևելքում գլխավոր դերակատարների այսօրվա քաղաքականությունը թույլ է տալիս որոշակի ենթադրություններ անել, թե ինչպիսին կլինի տարածաշրջանի անվտանգային միջավայրը առաջիկա տարիների ընթացքում: Թեև նման բարդ տարածաշրջանում միանշանակ կանխատեսումներ անելը բավականին վտանգավոր է, և մեծ է սխալվելու հավանականությունը, սակայն կան որոշ իրողություններ, որոնք նախանշում են իրադարձությունների զարգացման հավանական սցենարները:

Մերձավոր Արևելքում Ռուսաստանի դիրքերի ամրապնդումը մեծացնում է այդ երկրի համար Հարավային Կովկասի նշանակությունը, և հավանաբար առաջիկա տարիներին Մոսկվան կփորձի ավելի ամրապնդել իր ազդեցությունը մեր տարածաշրջանում: Հայաստանում ՌԴ ռազմական ներկայությունը տարածաշրջանում Ռուսաստանի ազդեցության պահպանման հիմնական երաշխիքն է, ուստի այդ ներկայությունը խաթարող ցանկացած գործողություն կարող է արժանանալ Մոսկվայի խիստ հակազդեցությանը:

Միաժամանակ, ինչպես նշեցինք, վերջին տարիներին ՌԴ-ը փորձում է բարելավել հարաբերությունները Ադրբեջանի և Վրաստանի հետ և առաջիկայում կշարունակի այդ քաղաքականությունը՝ հատկապես հաշվի առնելով Հայաստանում անորոշության հնարավոր խորացումը: Առավել մեծ վտանգ կարող է ներկայացնել ռուս-ադրբեջանական հարաբերությունների ջերմացումը՝ ինչին կարող է նպաստել տարածաշրջանային մի շարք հարցերում Ռուսաստանի ու Ադրբեջանի դաշնակից Թուրքիայի շահերի համընկնումը, ինչպես նաև Ռուսաստանի նկատմամբ Ադրբեջանի իշխանությունների հաճախակի դարձող ռևերանսները:

Մասնակցությունը Ռուսաստանի կողմից առաջնորդվող ռազմաքաղաքական և տնտեսական կառույցներին՝ ՀԱՊԿ, ԵԱՏՄ, Հայաստանի համար կենսական նշանակություն ունի, մինչդեռ այդ կառույցները հեղինակազրկելու, դրանց գործունեությունը տորպեդահարելու փորձերը Հայաստանի համար կարող են ճակատագրական հետևանքներ ունենալ: Ռուսաստանը փորձում է մեծացնել ԵԱՏՄ-ի

միջազգային հեղինակությունը և այդ նպատակով քայլեր են ձեռնարկվում մի շարք երկրների հետ համագործակցության ուղղությամբ: Իրանի և ԵԱՏՄ-ի միջև ազատ առևտրի պայմանագիրը դրա օրինակներից մեկն է: Վերջին շրջանում շատ են խոսակցությունները, որ Ադրբեջանը, Թուրքիան դիտորդի կարգավիճակով կարող են համագործակցել ԵԱՏՄ-ի հետ: Նման զարգացումները կարող են նվազեցնել Ռուսաստանի համար տարածաշրջանում Հայաստանի նշանակությունը:

Իրանի նկատմամբ ԱՄՆ-ի քաղաքականությունը տարածաշրջանում Հայաստանի համար լրացուցիչ մարտահրավերներ է ստեղծում: Եթե Թրամփը շարունակի պաշտոնավարել նաև 2020-ի ընտրություններից հետո, քիչ հավանական է, որ Միացյալ Նահանգների կոշտ հակաիրանական քաղաքականությունը կփոխվի առաջիկա տարիների ընթացքում: Թրամփի հակաիրանական քաղաքականության առանձնահատկությունն այն է, որ Իրանի դեմ «առավելագույն ճնշման» մարտավարությունը հաշվի չի առնում Իրանի հետ համագործակցող այլ երկրների, նույնիսկ ԱՄՆ-ի դաշնակիցների շահերը: Սա նշանակում է, որ առաջիկայում Իրանի հետ բնականոն հարաբերությունների պահպանմամբ շահագրգռված երկրները, այդ թվում՝ Հայաստանը, կարող են կանգնել ռազմավարական ընտրության առաջ:¹³

Ինչպես նշվեց, Փոխլրացման քաղաքականության հնարավորությունները այլևս չափազանց սահմանափակ են, քանի որ վերջին տարիներին գերտերությունները իրենց քաղաքականությունը կառուցում են պրագմատիկ հաշվարկների վրա: ԱՄՆ-ՌԴ, ԱՄՆ-Իրան, ԱՄՆ-ՉԺՀ հարաբերությունների բևեռացումը նվազեցնում է փոքր երկրների խուսանավելու հնարավորությունը, ուստի Հայաստանը անվտանգության նոր ռազմավարության մեջ պետք է հստակեցնեն ընտրության առաջ կանգնելու դեպքում իր ամենահավանական վարքագիծը, այնինչ այն ավելի անորոշ է նկարագրված:

Բաքու-Թբիլիսի-Կարս երկաթգծի, Հարավային գազային միջանցքի լիարժեք շահագործումը ավելի են խորացնելու Հայաստանի տարածաշրջանային շրջափակումը: Այլընտրանքային նախագծերի դանդաղումը հնարավորություն չի տալիս համահունչ արձագանքել մեկուսացման մարտահրավերին: Հայաստանը դուրս է մնում նաև Հյուսիս-Հարավ տրանսպորտային միջանցքի ծրագրից, քանի որ այս ուղղությամբ Ադրբեջանը նույնպես նախաձեռնությունը վերցրել է իր ձեռքը. ավարտին

¹³ Իրանի շուրջ վերջին զարգացումները և դիսկերը Հայաստանի համար, «ԼՈՒՅՍ հիմնադրամ», 22 նոյեմբերի 2019թ, <https://www.luys.am/index.php?m=publicationsOne&pid=119> (այցելվել է 05.08.2020թ):

են մոտենում Իրան-Ադրբեջան-Ռուսաստան երկաթգծի վերջնական շահագործմանը միտված աշխատանքները:

Եթե առաջիկայում Հայաստանը չկարողանա անհրաժեշտ քանակությամբ ներդրումներ ներգրավել և զարգացնել ենթակառուցվածքները՝ առաջին հերթին ավարտին հասցնելով Հյուսիս-Հարավ ավտոմայրուղու շինարարությունը, տարածաշրջանում մեր երկրի մեկուսացումը ավելի կխորանա: Հարկ է նշել, որ Վրաստանը արդեն իսկ քայլեր է ձեռնարկում դեպի Լարս տանող ճանապարհը վերականգնելու համար, նույնիսկ մի շարք միջազգային բանկեր հաստատել են այդ նախագծին տրամադրվող վարկերը (նախագծի ընդհանուր արժեքը շուրջ 550 մլն դոլար է):¹⁴

Եթե Հայաստանը չկարողանա համարժեք ներդրումներ ապահովել Հյուսիս-Հարավ ճանապարհի շինարարության համար, ապա Լարսի ճանապարհի բարեկարգումից նույնպես կօգտվեն առավելապես մեր հակառակորդները՝ Թուրքիան և Ադրբեջանը: Հայաստանի տարածաշրջանային մեկուսացման համար նոր, բավական ցավոտ հանգամանք կարող է դառնալ երկրում ստեղծված համաճարակային իրավիճակը: Սա միջնաժամկետ հեռանկարում կարող է Հայաստանի անվտանգության համար լուրջ խնդիրներ առաջ բերել: Հաշվի առնելով վերոհիշյալ՝ անհասկանալի է նոր ռազմավարության մեջ այս խնդիրների նկատմամբ ոչ համարժեք ուշադրությունը:

Բոլոր վերոհիշյալ իրողություններից բացի, Հայաստանի համար առաջնայինը շարունակում է մնալ Արցախյան հակամարտության կարգավորման հարցը: Անվտանգության նոր ռազմավարությունը մշակելիս հարկավոր էր առանձնահատուկ ուշադրություն դարձնել այդ գործոնի ազդեցությանը, Հայաստանի արտաքին անվտանգային միջավայրը դիտարկել առաջին հերթին Արցախյան հակամարտության համատեքստում: Ցավոք, նոր ռազմավարությունը Արցախյան հիմնախնդրի վերաբերյալ առաջ է բերում ավելի շատ մտահոգիչ հարցեր, քան պատասխանում արդեն իսկ առկա հարցերին:

¹⁴ ADB Approves \$415 Million Loan to Improve Georgia's North-South Road Corridor, News Release, 1 August 2019, <https://www.adb.org/news/adb-approves-415-million-loan-improve-georgias-north-south-road-corridor> (այցելվել է 05.08.2020թ):

4. ԱՐՑԱԽՅԱՆ ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳԱՀԱՏԱԿԱՆՆԵՐԸ ՆԱԽԿԻՆ ԵՎ ՆԵՐԿԱՅԻՍ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

2007-ի ռազմավարությունը Արցախի Հանրապետության հետագա ճակատագրի մասին բավականին հստակ մոտեցումներ էր պարունակում: Ռազմավարության մի առանձին գլուխ վերնագրված էր «Լեռնային Ղարաբաղի Հանրապետություն», որտեղ հստակ նշվում էր, որ «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հոչակման իրավական հիմքերն անխոցելի են»: Փաստաթղթում նշվում էր, որ «ցանկացած վերջնական համաձայնություն կամ վերջնական փաստաթուղթ պետք է ստանա նաև ղարաբաղյան կողմի հավանությունը, Հայաստանը ընդունելի է համարում կարգավորման միայն այն տարբերակները, որոնք ուղղված են Լեռնային Ղարաբաղի Հանրապետության փաստացի գոյության անշրջելի իրողությունն ամրագրելուն»: Ռազմավարությունը հստակ սահմանում էր նաև, որ Լեռնային Ղարաբաղը պետք է աշխարհագրական կապ ունենա Հայաստանի հետ, իսկ անվտանգությունը պետք է երաշխավորված լինի:¹⁵

Նշված մոտեցումը ընդհանուր առմամբ հստակորեն ընդգծում էր, որ անվտանգության նախորդ ռազմավարությունը Լեռնային Ղարաբաղի Հանրապետության փաստացի գոյությունը համարում էր նրա անկախ՝ Ադրբեյջանի սահմաններից դուրս կարգավիճակը: Նոր ռազմավարությունը պետք է պահպաներ այս մոտեցումը, ինչու չէ, նաև զարգացներ այն՝ ամրագրելով, որ Արցախի Հանրապետությունը երբեք չի կարող լինել Ադրբեյջանի կազմում:

Այս հանգամանքը կարևոր է, հատկապես եթե հաշվի առնենք, որ Հայաստանի այսօրվա իշխանությունները ամենաբարձր մակարդակով երբեք չեն նշել, որ Արցախը չեն պատկերացնում Ադրբեյջանի կազմում: Հետևաբար, հարցի վերաբերյալ հստակություն ապահովելու, տարընթերցումներից խուսափելու և հայկական կողմի ռազմավարական տեսլականը ամրագրելու առումով կարևոր էր ՀՀ անվտանգության նոր ռազմավարությամբ սահմանել, որ բանակցությունների արդյունքում Արցախի Հանրապետության հետագա ճակատագիրը որոշելիս հայկական կողմը բացառում է այնպիսի լուծում, որը կենթադրի որևէ ձևաչափով Արցախի վերադարձ Ադրբեյջանի կազմ: Այս մոտեցման ռազմավարական ամրագրումը թույլ կտար, որ ՀՀ ներկայիս և հաջորդ իշխանությունները արցախյան քաղաքականությունը կառուցեն՝ ելնելով այդ

¹⁵ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ, 26 հունվարի 2007թ., <http://www.mil.am/files/LIBRARY/HHAAR/827.pdf> (այցելվել է 05.08.2020թ):

սկզբունքից և խուսափելով Արցախի Հանրապետության կարգավիճակի վերաբերյալ տարատեսակ մեկնաբանություններից ու շահարկումներից:

Փոխարենը, անվտանգության նոր ռազմավարությունը Արցախյան հակամարտության վերաբերյալ պարունակում է ավելի անորոշ և մտահոգիչ ձևակերպումներ: Այսպես, ի տարբերություն նախորդ ռազմավարության, նոր փաստաթղթում առհասարակ բացակայում է Լեռնային Ղարաբաղի Հանրապետություն կամ Արցախի Հանրապետություն ձևակերպումը: Այս հանգամանքը շատ մտահոգիչ է, քանի որ ռազմավարական կարևոր փաստաթղթում փաստացի իջեցվում է Արցախի սուբյեկտայնության աստիճանը: Եթե վերջին 2 տարիների բանակցային գործընթացի տրամաբանությունը պարունակում էր Արցախի սուբյեկտայնությունը նվազեցնելու միտումը ուրվագծող հստակ ազդակներ, ինչը զուգորդվում էր այսպես կոչված «ԼՂ ադրբեջանական համայնքի» դերակատարության բարձրացմամբ, ապա անվտանգության նոր ռազմավարության մեջ «Արցախի Հանրապետություն» տերմինի բացակայությունը խոսում է այս հարցում Հայաստանի իշխանությունների մտահոգիչ հետքայլի մասին:

Ուշագրավ է, որ ՀՀ անվտանգության խորհրդի քարտուղարը, մեկնաբանելով փաստաթղթում «Արցախի Հանրապետություն» տերմինի բացակայության վերաբերյալ մտահոգությունները, իր հարցազրույցներում դա արդարացնում է այն իրողությամբ, որ իբրև այդ հարցի վերաբերյալ իշխանության դիրքորոշումը արտահայտված է Ստեփանակերտում հայտնի ելույթի ժամանակ վարչապետի արած «Արցախը Հայաստան է և վերջ» ձևակերպման մեջ: Սա այն պարագայում, երբ Անվտանգության ռազմավարության մեջ այդ հայտարարությունը որևէ կերպ արտացոլված չէ. ավելին, Արցախյան հակամարտությանը վերաբերող բոլոր դրվագներում հիշատակվում է ինքնորոշման սկզբունքը: Եթե սա դիտարկենք ընդհանուր առմամբ փաստաթղթում Արցախի սուբյեկտայնությունը կասկածի տակ դնող տերմինաբանության օգտագործման համատեքստում, ապա ավելի են սրվում ԼՂ հակամարտության կարգավորման գործընթացի վերաբերյալ ՀՀ իշխանությունների պաշտոնական դիրքորոշման շուրջ հակասությունները:

Եթե նախորդ ռազմավարության մեջ մի ամբողջ գլուխ վերնագրված էր «Լեռնային Ղարաբաղի Հանրապետություն», ապա նոր ռազմավարության մեջ նման գլուխ բացակայում է, փոխարենը Արցախյան հակամարտությունը ներկայացվում է «Արցախի անվտանգության ապահովում» ենթավերնագրի ներքո: Եթե նախորդ ռազմավարության մեջ հստակ նշվում էր, որ Հայաստանը ընդունելի է համարում կարգավորման միայն այն տարբերակները, որոնք միտված են Լեռնային Ղարաբաղի

Հանրապետության փաստացի գոյության անշրջելի իրողությունն ամրագրելուն, ինչպես նաև նշվում էր, որ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հռչակման իրավական հիմքերն անխոցելի են, ապա նոր ռազմավարության մեջ նշվում է, որ խաղաղ գործընթացի հիմքն են Արցախի կարգավիճակի և անվտանգության խնդիրները: Այս անորոշ ձևակերպումը, որը վերջին երկու տարիներին պարբերաբար օգտագործվում էր ՀՀ բարձրագույն իշխանության տարբեր ներկայացուցիչների կողմից, անվտանգության նոր ռազմավարության մեջ ոչ միայն չհաստատվեց, այլև ավելի հեղիեղուկ կերպով ներկայացվեց:

Փաստաթղթի այն հատվածում, որտեղ ներկայացվում են Հայաստանի հիմնարար ազգային շահերը, դրանց շարքում Արցախի մասով միայն նշվում է վերջինիս անվտանգության ապահովման հանգամանքը: Ազգային շահերի համատեքստում չի խոսվում ոչ Արցախի Հանրապետության անկախության և ինքնիշխանության և ոչ էլ վերջինիս սահմանների անվտանգության մասին:

Այսպես, փաստաթղթում նշվում է. «մենք շարունակելու ենք սատար կանգնել Արցախի ժողովրդի ինքնորոշման իրավունքի իրացմանը՝ առանց սահմանափակման և հարկադրանքի»: Խոսվում է ոչ թե Արցախի Հանրապետության անվտանգության պաշտպանության մասին, այլ նշվում է, որ «արցախահայության անվտանգության ապահովումը գերակա պայման է և ենթակա չէ զիջման»: Սա այն պարագայում, երբ Արցախի ժողովրդի ինքնորոշման իրավունքը արդեն իրացված է և արտացոլված է վերջինիս անկախության հռչակագրում և Սահմանադրության մեջ, ուստի ոչ թե անհրաժեշտ է սատար կանգնել այդ իրավունքի իրացմանը, այլ երաշխավորել փաստացի իրացված իրավունքի արդյունքում ձևավորված Արցախի Հանրապետության միջազգային ճանաչումը: Ինչ վերաբերում է անվտանգությանը, ապա պետք էր շեշտել ոչ թե արցախահայության անվտանգության ապահովման գերակայությունը, այլ հստակ նշել Արցախի Հանրապետության անվտանգության պահպանման անհրաժեշտության մասին: Առհասարակ, երբ ռազմավարության մեջ նշվում է, որ ՀՀ-ը Արցախի հայության անվտանգության երաշխավորն է, տրամաբանական հարց է առաջանում, թե ինչո՞ւ միայն Արցախի հայության, այլ ոչ թե Արցախի Հանրապետությունում բնակվող նաև այլ ազգերի՝ օրինակ եզդիների, ռուսների:

Ընդհանուր առմամբ, փաստաթղթի հեղինակները հնարավորինս խուսափել են Արցախի վերաբերյալ պետական ատրիբուտներ խորհրդանշող տերմինաբանության օգտագործումից: Այսպես, փաստաթղթի տարբեր հատվածներում նշվում է «հայ-ադրբեջանական միջպետական» սահման, սակայն «արցախա-ադրբեջանական

շփման գիծ», «Հայաստանի ժողովուրդ», բայց «Արցախի բնակչություն», «Հայաստանի Հանրապետություն» և «Արցախ»:

Ուշագրավ է, որ ռազմավարության ողջ տեքստում «Արցախի ժողովուրդ» տերմինը օգտագործվում է միայն վերոհիշյալ դրվագում, երբ խոսվում է Արցախի ժողովրդի ինքնորոշման իրավունքի իրացմանը առանց սահմանափակման և հարկադրանքի սատար կանգնելու մասին: Մնացած դեպքերում օգտագործվում են «Արցախի հայություն», «Արցախի բնակչություն» տերմինները: Սա շատ տարօրինակ միտում է, հատկապես եթե խոսվում է ինքնորոշման իրավունքի իրացման համատեքստում, քանի որ տերմինաբանության նման կիրառությունից կարելի է ենթադրել, որ Արցախի ժողովուրդը դեռ պետք է իրացնի իր ինքնորոշման իրավունքը, մինչդեռ այժմ խոսքը գնում է Արցախի (փաստացի) բնակչության կամ հայության մասին: Ակնհայտ է, որ «Ժողովուրդ» տերմինը ավելի ընդգրկուն և լայն է, սովորաբար հենց այս տերմինն է օգտագործվում պետությունների բնակչությանը բնութագրելու համար, մինչդեռ «Արցախի բնակչություն» կամ «Արցախի հայություն» տերմինները ավելի նեղ բնույթ ունեն, որը կարող է դիտարկվել որպես ավելի լայն՝ «Ժողովուրդ» տերմինի միայն մի մասնիկի համատեքստում:

Փաստաթղթում նշվում է, որ ժողովուրդների ինքնորոշման իրավունքը հիմք է հանդիսանում Արցախի բնակչության համար իր կողմից ընտրված իշխանությունների միջոցով բանակցությունների բոլոր փուլերում լիարժեքորեն մասնակցելու իր ճակատագրի որոշմանը: Այս ձևակերպումը նույնպես, առանց «Արցախի Հանրապետություն» տերմինի օգտագործման, կարող է տարատեսակ մեկնաբանությունների առիթ դառնալ. մասնավորապես, ադրբեջանական կողմը փորձ է անում որպես Արցախի ադրբեջանական համայնքի ընտրված ներկայացուցիչ ներկայացնել «Ղարաբաղի ադրբեջանական համայնքի» ղեկավարին և կարող է բարձրացնել բանակցություններին վերջինիս մասնակցության հարցը:

Անվտանգության նոր ռազմավարությունը պետք է նաև Արցախյան բանակցային գործընթացում և առհասարակ հակամարտության շուրջ տեղի ունեցող վերջին շրջանի բացասական միտումները շտկելու հնարավորություն ընձեռեր: Մասնավորապես, այն պետք է ամրագրեր, որ Հայաստանի Հանրապետությունը որպես Արցախի ժողովրդի միակ օրինական ներկայացուցիչ ճանաչում է Արցախի Հանրապետության իշխանություններին և բանակցությունների ընթացքում հիմնվելու է բացառապես այս իրողության վրա: Սա կարող էր հստակ ազդակ դառնալ, որ որևէ պարագայում չի կարող հավասարության նշան դրվել Արցախի իշխանությունների և Ադրբեջանի հատուկ ծառայությունների կողմից հորինված այսպես կոչված «Ադրբեջանի

ղարաբաղյան համայնքի ներկայացուցչի» միջև: Սակայն, ինչպես տեսնում ենք, փաստաթղթի հեղինակները շարժվել են հակառակ տրամաբանությամբ:

2007թ. ռազմավարության մեջ հստակ նշվում էր, որ Լեռնային Ղարաբաղը պետք է աշխարհագրական կապ ունենա Հայաստանի հետ, մինչդեռ նոր փաստաթղթում չի նշվում աշխարհագրական կապի մասին, այլ խոսվում է ավելի ընդհանրական՝ ՀՀ հետ ապահով, անվտանգ և բազմազանեցված փոխկապակցվածության համակարգի մասին:

Արցախյան հակամարտության հետ կապված՝ շատ կարևոր էր, որ անվտանգության նոր ռազմավարությունը մշակելիս հաշվի առնվեր նաև Ապրիլյան պատերազմի փորձը, հետևանքները, հստակ գնահատական տրվեր այդ իրադարձություններին: Մասնավորապես, հարկավոր էր վերջ դնել Ապրիլյան պատերազմում հայկական կողմի «պարտության» մասին շահարկումներին, հստակ ամրագրելով, որ տեղի ունեցածը Ադրբեջանի կողմից նախաձեռնված հարձակում էր, որը հետ է շարտվել՝ հակառակորդին հասցնելով էական կորուստներ, ունենալով նաև որոշ բացթողումներ, որոնք էական ազդեցություն չեն ունեցել ռազմական գործողությունների ելքի վրա:

Այստեղ կարևոր է այն հանգամանքի շեշտադրումը, որ ըստ էության՝ պատերազմում Ադրբեջանի նպատակը հակամարտության գոտում ռազմական իրավիճակի փոփոխությունն ու ըստ այդմ՝ բանակցային սեղանին առավելություն ձեռք բերելն էր, մինչդեռ հայկական կողմի նպատակն էր հնարավորինս քիչ զոհերի գնով սահմանների անվտանգության ապահովումը, հակառակորդին իր նախաձեռնած արկածախնդրության համար պատժելը, խուսափելը այնպիսի կորուստներից, որոնք Ադրբեջանին առավելություն կտային բանակցային սեղանին և շփման գծում: Ապրիլյան պատերազմին հաջորդող իրադարձությունները ցույց տվեցին, որ Ադրբեջանը չի կարողացել հասնել իր նպատակներին, իսկ հայկական կողմը ընդհանուր առմամբ լուծել է իր առջև դրված խնդիրները:

Մասնավորապես, Ադրբեջանը պատժվել է՝ տվել է մի քանի անգամ ավել մարդկային կորուստներ: Սահմանին ստատուս-քվոն պահպանվել է՝ Ադրբեջանի կողմից որոշ դիրքերի գրավումը վերջինիս որևէ լուրջ ռազմավարական առավելություն չի տվել, համենայն դեպս այդպիսի առավելության հետևանքների մասին փաստեր չկան: Ի վերջո, Ադրբեջանը բանակցային գործընթացում ոչ թե ամրապնդել է իր դիրքերը, այլ ստիպված է եղել Վիեննայում և Սանկտ Պետերբուրգում

զիջումների գնալ, Ապրիլյան պատերազմից հետո Ալիևը ինքն է հայտարարել, որ միջազգային հանրությունը իրեն ստիպում է ճանաչել Արցախի անկախությունը:

Ցավոք, նոր ռազմավարության մեջ անհրաժեշտ ձևով անդրադարձ չի կատարվում 2016թ. ապրիլյան ռազմական գործողություններին: Թեև հստակ արձանագրվում է Ադրբեջանի ռազմական ագրեսիայի փաստը, սակայն գնահատական չի տրվում հայկական զինված ուժերի գործողություններին, չի նշվում հայկական կողմի հաղթանակի, Ադրբեջանի ծրագրերի տապալման մասին: Որևէ կերպ անդրադարձ չի կատարվում Ապրիլյան պատերազմից հետո դիվանագիտական ճակատում հայկական կողմի ունեցած ձեռքբերումներին՝ Վիեննայի և Սանկտ Պետերբուրգի պայմանավորվածություններին, չի նշվում այդ պայմանավորվածությունների շրջանակներում ստանձնած պարտավորություններից հրաժարվելու ադրբեջանական քաղաքականության մասին: Նոր ռազմավարության մեջ Ապրիլյան պատերազմի մասին հստակ գնահատականների բացակայությունը բաց է թողնում դրա վերաբերյալ բազմաթիվ շահարկումների դաշտը, ինչը անվտանգության տեսանկյունից պարունակում է բազմաթիվ սպառնալիքներ:

ՀԵՏԵՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ժամանակակից պետության համար ազգային անվտանգության ռազմավարությունը հանդիսանում է առանցքային նշանակություն ունեցող փաստաթուղթ և կարևոր ուղենիշներ է սահմանում պետության հետագա զարգացման և պետության հիմնական առաքելություններից մեկի իրացման՝ անվտանգության պահպանման համար: Արդեն նշվեց, որ տարբեր հանգամանքների բերումով Հայաստանի անվտանգության տեսանկյունից հատկապես կարևոր նշանակություն ունի արտաքին անվտանգային միջավայրը: Վերլուծելով անվտանգության նախորդ և ներկայիս ռազմավարությունները և Հայաստանի արտաքին անվտանգային միջավայրում տեղի ունեցած և սպասվելիք փոփոխությունները, կարող ենք հանգել հետևյալ եզրակացություններին.

1. Ինչպես 2007թ. անվտանգության նախորդ ռազմավարության ընդունման ժամանակահատվածում, այնպես էլ այսօր Հայաստանը կանգնած է արտաքին անվտանգային մարտահրավերների էական տրանսֆորմացիայի նախաշեմին:

2. Նախորդ ռազմավարությունը հիմնականում կարողացել է ապահովել երկրի առջև ծառացած արտաքին անվտանգային սպառնալիքներին դիմակայելու իր առաքելությունը: Նոր ռազմավարությունում մի շարք թերությունների առկայությունը այս տեսանկյունից բավականաչափ մտահոգություններ է առաջ բերում:

3. 2007թ. ռազմավարության շրջանակներում ներկայացված և կանխատեսված մարտահրավերները ոչ միայն չեն վերացել, այլև ավելի են խորացել և դրանց ավելացել են նորերը: Այս փաստը թեև արձանագրված է նոր ռազմավարության մեջ, սակայն այն չի կարողացել լիարժեքորեն ներկայացնել գոյություն ունեցող և նոր ի հայտ եկած արտաքին սպառնալիքների ողջ սպեկտրը, դրանց հակազդելու վերաբերյալ Հայաստանի ռազմավարական տեսլականն ու ճանապարհային քարտեզը:

4. Եթե 2007թ. փաստաթղթում Հայաստանի արտաքին անվտանգային ռազմավարության առանցքում դրվել էր փոխլրացման սկզբունքը, որը նախորդ տասնամյակի ընթացքում մեծ մասամբ իրեն արդարացրել է, ապա այժմ այդ քաղաքականության կիրառումը շատ ավելի դժվար է լինելու՝ կապված աշխարհաքաղաքական արագ վերադասավորումների, գերտերությունների հակասությունների սրման և այլ հանգամանքների հետ:

5. Հետևաբար, հարկավոր էր որդեգրել արտաքին անվտանգային քաղաքականության նոր, ավելի պրագմատիկ և առկա մարտահրավերներին համահունչ սկզբունք: Ակնհայտ է, որ նոր ռազմավարության մեջ տեղ գտած և ԱԳՆ-ի կողմից վերջին շրջանում պարբերաբար ներկայացվող սկզբունքները՝ այն է ինքնիշխանությունը, համահայկականությունը և փոխգործակցությունը, չափազանց անորոշ և ոչ հստակ են արտաքին անվտանգային նոր ռազմավարության հիմքերում դրվելու համար: Հաշվի առնելով Հայաստանի առջև ներկայումս ծառացած արտաքին անվտանգային մարտահրավերները՝ կարելի էր, օրինակ՝ կիրառության մեջ դնել այսպես կոչված «կայուն փոխլրացման» սկզբունքը: Այն պետք է ընդհանուր առմամբ ավելի կանխատեսելի դարձներ Հայաստանի արտաքին քաղաքական ուղղվածությունը մեր գործընկերների և դաշնակիցների համար՝ միաժամանակ պահպանելով որոշակի ճկունության հնարավորությունը: Ինչպես նշվեց, փոփոխվող աշխարհակարգում շատ ավելի հավանական է դառնում փոքր երկրներին աշխարհաքաղաքական ընտրության առջև կանգնեցնելու և այդպիսի ընտրության անխուսափելիության հեռանկարը: Արտաքին քաղաքականության մեջ կայունության սկզբունքի ներդրումը հստակորեն ցույց կտար, որ Հայաստանը չի պատրասվում իր արտաքին քաղաքական հիմնական վեկտորից կտրուկ շրջադարձեր կատարել և ընտրության առջև հայտնվելու դեպքում հենվելու է հենց կայունության սկզբունքի վրա: Նոր փաստաթղթում այս սկզբունքը պետք է արտացոլված լիներ նաև աշխարհաքաղաքական իրողությունների ճիշտ ներկայացման, տարբեր երկրների և միջազգային կառույցների, առաջին հերթին՝ գերտերությունների և դաշնակիցների հետ հարաբերությունների, դրանց վերաբերյալ հայկական կողմի տեսլականի ավելի

հստակ և համապարփակ ներկայացմամբ, սակայն ընդունված ռազմավարությունը այս տեսանկյունից ավելի շատ նոր հարցեր է առաջ բերում:

6. Նոր ռազմավարության մեջ հարկավոր էր ավելի մեծ դեր հատկացնել հայ-չինական հարաբերություններին և Չինաստանի նախաձեռնած մի շարք միջազգային ծրագրերին՝ հաշվի առնելով փոփոխվող աշխարհակարգում Չինաստանի դերի ավելացումը, ինչպես նաև տարածաշրջանում ՉԺՀ-ի ներկայության ու ազդեցության մեծացումը:

7. Հաշվի առնելով Հայաստանի անդամակցությունը ՀԱՊԿ-ին և ԵԱՏՄ-ին, նոր ռազմավարությունը պետք է հստակորեն գնահատեր այդ կառույցների դերը Հայաստանի արտաքին անվտանգության հարցում, այդ կառույցներում երկրի կողմից իրականացվող քաղաքականությունը դնել ավելի կայուն և ռազմավարական ուղու վրա:

8. Ռազմավարությունը պետք է կարողանար լիարժեքորեն արտացոլել հայ-ռուսական ռազմավարական-դաշնակցային հարաբերությունների ողջ էությունն ու կարևորությունը և հստակորեն ընդգծել այդ հարաբերությունների հետագա զարգացման նկատմամբ Հայաստանի ռազմավարական տեսլականը: Նման հստակեցումը թույլ կտար Հայաստանը ներկայացնել որպես ավելի կանխատեսելի և կայուն դաշնակից, որի ռազմավարական և երկարաժամկետ վարքագիծը կախված չէ Հայաստանում տեղի ունեցող ներքաղաքական զարգացումներից և միտված է լինելու դաշնակցային պարտավորությունների լիարժեք կատարմանը: Ցավոք, նոր փաստաթղթում Հայաստանի անվտանգության հարցում ռուսական գործոնի կարևորությունը լիարժեք հաշվի չի առնվել:

9. Հարկավոր էր ավելի հստակեցնել Արցախյան հակամարտության կարգավորման գործընթացների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության ընդհանուր ռազմավարությունը, նախանշել այն «կարմիր գծերը», որոնց շրջանցումը կարող է էական սպառնալիքներ ստեղծել Հայաստանի և Արցախի ազգային անվտանգության համար: Սա շատ կարևոր էր հատկապես ՀՀ իշխանությունների կողմից կարգավորման գործընթացի վերաբերյալ պարբերաբար հնչեցվող իրարամերժ հայտարարությունների համատեքստում: Անվտանգության ռազմավարությունը պետք է լիներ այն փաստաթուղթը, որից պետք է բխեին կարգավորման վերաբերյալ պաշտոնական հայտարարությունները և բանակցությունների ժամանակ հայկական պատվիրակությունների վարքագիծը, որը պետք է հնարավորություն տար խուսափելու հակասական հայտարարությունների

պատճառով անբարենպաստ բանակցային դիրքերում հայտնվելու հեռանկարից: Այս տեսանկյունից շատ կարևոր էր ռազմավարական այս կարևոր փաստաթղթում արձանագրել այն պարզ ճշմարտությունը, որ Արցախը ցանկացած կարգավիճակով երբևէ չի կարող հայտնվել Ադրբեջանի կազմում: Այս սկզբունքը արտահայտված էր նաև նախորդ ռազմավարության մեջ, սակայն հարկավոր էր այն ավելի հստակեցնել և նվազագույնի հասցնել տարընթերցումների և շահարկումների հնարավորությունը: Ցավոք, նոր ռազմավարությունը Արցախյան հարցում ավելի է խորացրել անորոշությունը, փաստաթղթում բացակայում են մի շարք կարևոր հարցերի պատասխանները, ի հայտ են գալիս նորերը: Անվտանգության նոր ռազմավարությունը ոչ միայն չտուգեց բանակցային գործընթացում վերջին 2 տարիներին հայկական կողմի թույլ տված բացթողումները, այլև այդ հեղեղուկ, հակասական քաղաքականությունը արտացոլեց նաև ռազմավարական այս կարևորագույն փաստաթղթում:

10. Նոր ռազմավարությունը պետք է հստակ գնահատականներ տար վերջին տասնամյակների ընթացքում տարածաշրջանում և մասնավորապես Հայաստանի նկատմամբ Թուրքիայի կողմից իրականացվող քաղաքականությանը և ռազմավարական ուղենիշներ սահմանելու հայ-թուրքական հարաբերությունների հետագա ընթացքի համար: Այն պետք է նաև հստակեցնել Հայոց ցեղասպանության հարցում Թուրքիայի ժխտողականությանը և վերջինիս կողմից ապատեղեկատվության տարածմանը հակազդելու Հայաստանի քաղաքականությունը: Ներկայացված փաստաթուղթը չի արդարացնում նաև այս հարցի շուրջ ձևավորված ակնկալիքները:

11. Փաստաթուղթը պետք է նաև նոր ռազմավարական լուծումներ առաջարկեր հայ-վրացական և հայ-իրանական հարաբերությունների զարգացման համար՝ հաշվի առնելով այդ երկրների շուրջ ստեղծված տարածաշրջանային և աշխարհաքաղաքական ժամանակակից իրողությունները և Հայաստանի համար վերջիններիս կարևորությունը, այնինչ սահմանափակվել է միայն այս երկրների հետ հարաբերությունների կարևորության մասին «արարողակարգային» հիշատակումներով:

12. Հայաստանի անվտանգության նոր ռազմավարությունը պետք է նաև վերաիմաստավորեր Հայաստան-ԵՄ հարաբերությունների վերաբերյալ մեր երկրի ռազմավարական մոտեցումները՝ հաշվի առնելով Համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագրի առկայությունը և դրա արդյունքում ձևավորված

հարուստ երկկողմ օրակարգը, ինչը, սակայն, նույնպես ընդունված փաստաթղթում անհրաժեշտ ձևով չի արվել:

«ԼՈՒՅՍ հիմնադրամ» գրառմամբ հրապարակված նյութը պաշտպանված է ՀՀ օրենսդրությամբ և միջազգային համաձայնագրերով: Հրապարակված նյութի բոլոր իրավունքների բացառիկ իրավատերը **«ԼՈՒՅՍ»** հիմնադրամն է:

Նյութի ամբողջական կամ դրանից քաղվածքների վերարտադրումը թույլատրվում է իրականացնել միայն **«ԼՈՒՅՍ հիմնադրամ»** գրառման և համապատասխան **ակտիվ հղման** տեղադրման պայմանով՝ պահպանելով «ԼՈՒՅՍ» հիմնադրամին պատկանող նյութերի օգտագործման կարգը: